ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը 100 դրամ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ
15 ՄԱՅԻՍԻ 2012թ • № 13 (254)

www.syuniacyerkir.am

Եվ ինչ-որ վերջապես մնաց, -

Հնձեց Հողմն այս ամեհի...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԱՆՈՄԱԼԻԱ

ՖՈՏՈԼՈՒՐ / ԱՐԽԻՎ, 2007թ.

Ընտրողների 80%-ը քվեարկեց երկիրը հինգ տարի կառավարած կոալիցիոն ուժերի օգտին

Ազատամարտիկի քարեղեն կերպարը՝ անհարկի շահարկումների առարկա

Արցախյան գոյակռվի նահատակ Վուրգ Ոսկանյանի հուշարձանի շուրջ շահարկումները մայիսի 5-ին հասել էին գագաթնակետին

ՍԻՍԻԱՆ

Վուրգ Ոսկանյանի հուշարձանը Սիսիանում կանգնեցնելու մասին պայմանավորվածությունը ձեռք էր բերվել 2010թ. մայիսի 28-ին՝ Սիսիանի N1 միջնակարգում, որտեղ նշվում էր ազատամարտիկի 69-ամյակը: Այդ մասին հայտարարություն էին արել ազատամարտիկի մարտական ընկեր Աշոտ Մինասյանն ու Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը: Ավելի ուշ Սիսիանի զինկոմիսարիատի հարակից այգին համայնքի ավագանու որոշմամբ կոչվեց Ազատամարտի հրապարակ, որտեղ 2011թ. մայիսի 28-ին պետք է կանգնեցվեր հուշարձանը: Նախաձեռնությունը կյանքի կոչելու համար Սիսիանում կազմակերպվեց դրամահավաք: Հուշարձանը կերտելու գործը ստանձնեց ճանաչված քանդակագործ, պրոֆեսոր Գետիկ Բաղդասարյանը:

Խոստացված ժամկետում, այնուամենայնիվ, հուշարձանի տեղադրումը չիրականացվեց, որի պատճառների քննությունն այլ թեմա է:

Ազգային ժողովի վերջին ընտրությունների քարոզարշավի ամենաբուռն օրերին, սակայն, Վուրգի հուշարձանի տեղադրման անհարկի ձգձգման հարցը Սիսիանում կրկին դարձավ օրակարգային: Չենք ուզում պնդել, որ հարցը բարձրացվեց քաղաքական, ավելի ստույգ՝ նախընտրական նկատառումներից ելնելով, տեղական ինչ-որ պաշտոնյաների մեղադրելու մտադրությամբ, թեեւ Սիսիանում իշխում է նաեւ այդ մտայնությունը: Եթե անգամ նման մտադրություն ունեին տեղական որոշ գործիչներ, ապա հենց այդ օրերին երեւան եկան դրան նպաստող եւ հարցն իսկապես հրատապ դարձնող նոր հանգամանքներ: Խնդիրը, անշուշտ, սիսիանյան թերթերից մեկում հարցի մանրամասն քննարկման մեջ չէր: Բանն այն է, որ (ըստ մեր ունեցած տեղեկությունների) ապրիլի կեսերին մայրաքաղաքում թալանվել է Գետիկ Բաղդասարյանի արվեստանոցը: Գողացել էին նաեւ Վուրգի արձանի պղնձյա որոշ դրվագներ: Հենց այդ վանդալիզմն էլ պատճառ դարձավ որերորդ անգամ եւ ավելի հուժկու հնչեցնելու հարցը՝ իսկ ինչո՞ւ մինչեւ հիմա հուշարձանը քանդակագործի արվեստանոցից չի տեղափոխվել Սիսիան ու չի տեղադրվել: Քաղաքապետ Աղասի Հակոբջանյանն էլ նախընտրական հանդիպումներում, ի պատասխան այդ հարցի, խոստացել էր, որ մինչեւ ընտրությունների օրը՝ մինչեւ մայիսի 6-ը, խնդիրը կլուծվի: Եվ ահա մայիսի 4-ի երեկոյան հուշարձանը տեղափոխվում է Սիսիան, իջեցվում «Անի» սրճարանի բակում: Սիսիան է ժամանում

Վուրգ Ոսկանյանի հուշարձանը:

նաեւ Գետիկ Բաղդասարյանը՝ իր աշակերտներով, հուշարձանի կորսված դրվագները վերականգնելու, ապա եւ հուշարձանը տեղադրելու առաքելությամբ: Մայիսի 5-ին հուշարձանն ամբողջությամբ վերականգնված էր, տասնյակ երկրապահներ ոգեւորված շնորհավորում էին միմյանց: Այդ ժամանակ է, որ երկրապահները հարց են բարձրացնում՝ ինչո՞ւ պետք է մեր հրամանատարի հուշարձանը մնա ցեխի մեջ ընկած, ինչո՞ւ հենց այսօր չտեղադրել հուշարձանը:

Ողջունելով հուշարձանի տեղափոխման եւ

Շարունակությունը՝ էջ 4

Մեր երթը՝ անգաղափար

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Մայիսի 6-ի ընտրությունների պաշտոնական արդյունքները հայտնի են: Թե որքանով են դրանք արտացոլում հասարակական-քաղաքական ուժերի իրական հարաբերակցությունը հանրապետությունում, դժվար է ասել: Իսկ եթե անվերապահորեն ընդունելու լինենք քվեարկության պաշտոնական արդյունքները, ապա կնշանակի, որ ընտրողների 80%-ը շատ գոհ է վերջին հինգ տարում երկրում իրականացված քաղաքականությունից, ինչի համար եւ ձայնը տվեց կոալիցիոն երեք ուժին՝ ՀՀԿ-ին, ԲՀԿ-ին եւ ՕԵԿ-ին: Դա նշանակում է նաեւ (եթե առաջնորդվենք քաղաքագիտության տարրական կանոններով), որ ընտրողների 80%-ն արտահայտվել է վերջին հինգ տարվա կուրսը շարունակելու օգտին: Իրականում, մինչդեռ... Մայիսի 6-ին հերթական անգամ ցույց տվեցինք, որ ընտրությունների ելքը մեզանում վճռում են փողը, վարչական ռեսուրսը, հանրության մեջ զբաղեցրած դիրքը կամ աշխատատեղերը պահելու խնդիրը, գործատուներից սոցիալ-տնտեսական կախվածությունը, ընչաքաղցությունը, թայֆայական հարաբերությունները, կենցաղային մանր-մունր հարցերը: Որերորդ անգամ ապացուցեցինք, որ նախընտրական ծրագրերը, գաղափարները մեզանում պահանջված չեն: Իշխանությունները կարող էին նույնիսկ (խոսքը Սյունիքի մասին է) ըստ համայնքների «բարեգործական» ծրագրեր չիրագործել, որոնցից յուրաքանչյուրի համար հատկացվեց երեքից մինչեւ մի քանի տասնյակ մլն դրամ: Կապան քաղաքում այդ կարգի ներդրման չափը հասավ մոտ մեկ մլրդ դրամի: Մարդկանց լիուլի բավարարում էր առձեռն ստացված հինգ հազար դրամը, թեեւ քվեարկության օրը, ըստ շրջանառվող խոսակցությունների, մեկ ձայնի սակագինը բարձրացավ մինչեւ տասն անգամ: Եվ սխալ ենք վարվում, երբ մարդուն մեղադրում ենք հինգ հազար դրամին նախապատվություն տալու մեջ: Տարիներ շարունակ մարդիկ այն ճանապարհով են առաջնորդվել ու առաջնորդվում, որ համայնքային ծրագրերն անգամ (մանավանդ որ այդ ծրագրերի մի մասը կոնկրետ համայնքապետերի անձնական խնդիրների լուծմանն ուղղվեց) հինգ հազար դրամի համեմատությամբ (շարքային մարդկանց համար) ոչինչ են: Ուրեմնեւ՝ ոչ թե մարդկանց մեղադրենք անսկզբունքայնության մեջ, այլեւ մտածենք, թե ինչու մարդիկ դարձան այդպիսին:

Իհարկե, հանրության մեջ տեղի չունեցան աղմկահարույց դեպքեր, էքսցեսներ: Պատճառն այն չէ, որ ավելի քաղաքակիրթ ենք դարձել: Պատճառն այն է, որ դրա կարիքը պարզապես չկար, իսկ ավելի ճիշտ՝ չկար դիմադրություն: Լիներ դիմադրություն, կլինեին նաեւ վայրագություններ:

Քարոզչության ելած շատ-շատ մարդիկ (գրեթե բոլոր քաղաքական ուժերից) կորցրել էին բանական մարդուն անասունից տարբերող գլխավոր հատկանիշը՝ ամոթը: Քաղաքականության մեջ տարիներ շարունակ ապականված ու այլասերված հայտնի դեմքերից շատերը հանդես էին գալիս կույսի կեցվածքով: Կռապաշտը խոսում էր քրիստոնեական արժեքներից: Հայ ժողովրդին ասպատակած ու ասպատակող ավազակը խոսում էր

Շարունակությունը՝ էջ 4

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ Ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 ● (091) 45 90 47 ● (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 13 254
15 ՄԱՅԻՍԻ 2012

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2012

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

Ընտրության արդյունքները հանրապետությունում

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ՝ 2,524,960,
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ՝ 1,574,430



ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

Ընտրության արդյունքները Սյունիքի մարզում

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ՝ 121,636,
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ՝ 87,932 (72.09%)



ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

Հայկ Գրիգորյանը՝ ԱԺ պատգամավոր

N37 ընտրատարածքում, որտեղ ընտրողների ընդհանուր թիվը եղել է 54028 հոգի, մայիսի 6-ի քվեարկությանը մասնակցել է 35741 ընտրող: Հայկ Գրիգորյանի օգտին քվեարկել է 19894, Թաթուլ Հակոբյանի օգտին՝ 11822, Սամվել Հարությունյանի օգտին՝ 1492, Վարազդատ Վարդազարյանի օգտին՝ 1190 հոգի:

Հինգ տարի առաջ այդ ընտրատարածքում Ալեքսանդր Սարգսյանը պատգամավոր էր ընտրվել 20228 ձայնով:

Մայիսի 6-ին նույն այդ ընտրատարածքում 1492 ձայն ստացած Սամվել Հարությունյանը հինգ տարի առաջ ստացել էր 13606 ձայն: Սամվել Հարությունյանն այդ ճակատում է 1990 թվականից:

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

Վահե Հակոբյանն ընտրվեց երրորդ անգամ

N38 ընտրատարածքում ԱԺ պատգամավոր դարձած Վահե Հակոբյանն այլեւս ԱԺ հնաբնակներից է: Առաջին անգամ պատգամավոր էր ընտրվել 2004թ. հունիսի 13-ին N52 ընտրատարածքում՝ ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրության արդյունքում: Երկրորդ անգամ պատգամավոր ընտրվեց 2007թ. մայիսի 12-ին N38 ընտրատարածքում, որն ընդգրկում է Կապանի եւ Մեղրու շրջանները: Ս.թ. մայիսի 6-ին Վահե Հակոբյանը պատգամավոր ընտրվեց երրորդ անգամ՝ ստանալով 21980 ձայն (քվեարկությանը մասնակցել է 34094 հոգի): Նա այս անգամ ուներ արժանավոր մրցակիցներ, որոնցից առավել մեծ հանրային աջակցություն էր վայելում Գագիկ Գեւորգյանը (ստացավ 7929 ձայն): 1505 ձայն ստացավ Դավիթ Մաթեւոսյանը, 1220 ձայն՝ Նարինե Մովսիսյանը:

Հին պարտության լեգենդը

Զինվորականությունը նորից փրկեց ՀՀԿ-ին

ՔԱՋԱՆՑ ՍՅՈՒՆԻՔ

Ըստ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի մայիսի 7-ին տարածած տեղեկատվության՝ ԱԺ 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների համամասնական կարգով քվեարկության համար մարզն ընդգրկող N37 եւ N38 ընտրատարածքներում ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 121449 (այդ թվում՝ 65513-ը՝ N37-ում, 55936-ը՝ N38-ում): Մայիսի 6-ին քվեարկությանը մասնակցել է 87932 հոգի, որից՝ N37-ում՝ 46858, N38-ում՝ 41074 հոգի:

Ընտրողների ընդհանուր թիվը մարզի երկու ընտրատարածքում (մեծամասնական ընտրակարգ) կազմել է 103799 հոգի, որից՝ 54028-ը՝ N37-ում, 49771-ը՝ N38-ում: Մայիսի 6-ի քվեարկությանը մասնակցել է՝ N37 ընտրատարածքում՝ 35741, N38 ընտրատարածքում՝ 35315 հոգի (ընդամենը՝ 71056 ընտրող):

Համամասնական ընտրակարգով ընտրելու իրավունք ունեցողների (121449) եւ մեծամասնական ընտրակարգով ընտրելու իրավունք ունեցողների (103799) թվի տարբերությունը 17650 է: Նրանցից 13-ը «Գորիս» քրեակատարողական հիմնարկում գտնվող ձերբակալված կամ կալանավորված անձինք են, իսկ մյուսները՝ 17637 հոգի, զինվորականներ (չհաշված ոչ պարտադիր ժամկետային զինծառայողները): Ընդ որում՝ 17650 հոգուց 11485-ն ընդգրկված էր N37-ի, 6165-ը՝ N38-ի ընտրացուցակներում:

Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի Հոդված 114-ի 1-ին կետի. «Յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայնի իրավունք՝ համամասնական ընտրակարգով ընտրության, եւ մեկ ձայնի իրավունք՝ մեծամասնական ընտրակարգով ընտրության ժամանակ, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի»:

Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի Հոդված 2-ի 4-րդ կետի. **«Պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները, ձերբակալված կամ կալանավորված անձինք, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները տեղական ինքնակառավարման մարմինների եւ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ քվեարկություններին չեն կարող մասնակցել»:**

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երկարաժամկետ դիտորդների դիտարկման որոշ արդյունքներ

2012թ. մայիսի 6-ին կայացած ԱԺ ընտրությունների ամբողջ ընթացքը դիտարկում էին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները, ովքեր Հայաստան են ժամանել մարտի 22-ին: Նրանցից Յորգան Բեքլունդը (Շվեդիա) եւ Նիկոլայ Խոխլովը (Ռուսաստանի Դաշնություն) դիտարկումներ են արել Սյունիքի մարզում: Մայիսի 7-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը տարածել է նախնական հանգամանքների եւ եզրակացությունների վերաբերյալ հայտարարություն, որում ներկայացված է դիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումների նախնական պատկերը: Ամբողջական զեկույցը կհրապարակվի ս.թ. հուլիսի 5-9-ը կայանալիք ԵԱՀԿ տարեկան նիստում, որը կներառի նաեւ հնարավոր բարեփոխումների վերաբերյալ առաջարկներ: Դիտարկում-գնահատումն իրականացվել է որոշելու համար, թե արդյո՞ք ԱԺ ընտրությունները համապատասխանում են ԵԱՀԿ առջեւ Հայաստանի ստանձնած պարտավորություններին, Եվրոպայի խորհրդի չափանիշներին եւ երկրի օրենսդրությանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից ներկայացված նախնական հաշվետվության մեջ ՀՀ ԱԺ ընտրությունների արձանագրվել են Ընտրական օրենսգրքով արգելված վարչական ռեսուրսների չարաշահման որոշ դեպքեր: Ըստ դիտորդների՝ չնայած այն բանին, որ ուսումնական ոլորտում աշխատողների կողմից քարոզչությունն ու աշխատանքային պարտականությունների համատեղումն արգելվում է, եղել են բազմաթիվ դեպքեր, երբ ՀՀԿ-ն ակտիվորեն այդ գործընթացում ներառել է ուսուցիչներին եւ աշակերտներին, երբեմն՝ նույնիսկ դասերի հաշվին: ՀՀԿ քարոզարշավն ընթացել է դպրոցների տնօրենների ակտիվ մասնակցությամբ: Վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերից Սյունիքում արձանագրվել է այն, որ գյուղապետերից մեկը ՀՀԿ կողմնակիցների եւ «կասկածելիների» ցուցակներ է կազմել՝ խնդրելով տեղի դպրոցի տնօրենին ստուգել դրանք: Դպրոցի տնօրենը հաստատել է այդ փաստը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդներին եւ ներկայացել որպես ՀՀԿ կողմնակից: Դիտորդներն արձանագրել են փաստը, երբ շտապ օգնության մեքենայով հայտարարել են Կապանում կազմակերպվելիք ՀՀԿ հանրահավաքի մասին: Վարչական ռեսուրսների չարաշահումով, այդ թվում ուսումնական ոլորտի աշխատակիցների մարդկային ռեսուրսն օգտագործելով՝ խախտվել են Ընտրական օրենսգրքի 18-րդ եւ 22-րդ հոդվածները: Դեռ ավելին, նման գործունեությունը մասնակիցների համար անհավասար մրցակցային դաշտ է ստեղծել՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությանը: Ընտրական օրենսգրքի 18.7 հոդվածն արգելում է ընտրությունների մասնակիցների հետ փոխկապակցված բարեգործական կազմակերպություններին նախընտրական քարոզչության ժամանակ տրամադրել կամ խոստանալ ապրանքներ եւ ծառայություններ: Սակայն այս հարցի վերաբերյալ բողոքին ԿԸՀ-ն որոշել է, որ դրանում օրենքի խախտում չկա: Կապանում երկարաժամկետ դիտորդներն արձանագրել են մի դեպք, երբ թիվ 38 ընտրատարածքում առաջադրված ՀՀԿական թեկնածուի անունը նշված էր ճանապարհի վերանորոգման մասին հայտնող ցուցանակի վրա: Վերանորոգումը ֆինանսավորում է Քաջարանի ՊՄ կոմբինատը, որի տնօրենը ՀՀԿ-ական թեկնածուի հայրն է: Այս հարցի վերաբերյալ ՀԱԿ թեկնածուի ներկայացրած բողոքին ի պատասխան թիվ 38 ԸԸՀ-ն մերժել է բողոքը՝ հիմնավորելով, թե դա անօրինական գործունեություն չէ: ԿԸՀ-ն հրաժարվել է քննել տվյալ ԸԸՀ-ի որոշման դեմ բերված բողոքը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդների կողմից արձանագրվել են նաեւ թեկնածուների գրանցման վերաբերյալ չորս դատ, որից մեկը՝ Սյունիքի մարզի թիվ 37 ընտրատարածքում: Նրանց աչքից չի վրիպել նաեւ ընտրողների անձնագրերում կնիքի թանաքի անհետացումը, որը պետք է մնար մինչեւ 12 ժամ, սակայն որոշ դեպքերում անհետացել է մեկ-երկու ժամ հետո: Այսինքն՝ կնիքի առկայությունը կարող էր հանդիսանալ բազմակի քվեարկության դեմ երաշխիք, եւ քանի որ որոշ տեղամասերում կնիքները շուտ են անհետացել, ուրեմն հնարավորությունը մեծ է, որ որոշ մարդիկ, այդ թվում նաեւ զինծառայողները, մի քանի անգամ քվեարկեն:

Պատրաստեց՝
ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ

Տեսանկարահանումներ ընտրական տեղամասերում

2012 թվականի մայիսի 6-ի ԱԺ ընտրություններում տեսագրելու ցանկություն էին հայտնել կուսակցությունների ներկայացուցիչները, ովքեր հանդես էին եկել համատեղ հայտարարությամբ, որում մասնավորապես նշվում է. «Մենք՝ «Բարգավաճ Հայաստան», Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հայաստանի դեմոկրատական, Հայաստանի կոմունիստական, Հայաստանի հանրապետական, «Օրինաց երկիր» կուսակցությունների ներկայացուցիչներս, կարեւորելով 2012թ. Ազգային ժողովի ընտրությունների անցկացման որակը ու պատշաճ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը եւ հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 6-րդ, 48-րդ եւ 67-րդ հոդվածների դրույթները՝ որոշեցինք դրսեւորել միասնական կամք, միավորել մեր հնարավորությունները եւ համատեղ ջանքերով ՀՀ հնարավորինս մեծաքանակ ընտրական տեղամասերում իրականացնել քվեարկության գործընթացի եւ արդյունքների ամփոփման տեսանկարահանում՝ չխախտելով քվեարկության գաղտնիությունը: Յուրաքանչյուր մասնակից կուսակցության վստահված անձի կատարած տեսանկարահանումն ըստ պահանջի կտրամադրվի մյուս մասնակից կուսակցությանը: Սույն հայտարարությանը կարող են միանալ Ազգային Ժողովի ընտրություններին համամասնական կարգով մասնակցող մյուս կուսակցությունները»:

Սակայն այս հայտարարությանը չեն միացել «Ժառանգություն» ու «Միավորված հայեր» կուսակցությունները եւ Հայ ազգային կոնգրեսը: Սյունիքի շատ տեղամասերում մայիսի 6-ին ընտրությունների ընթացքը տեսագրվել է, սակայն ոչ ամբողջը, որովհետեւ տեսախցիկների մարտկոցները ժամանակ առ ժամանակ լիցքավորելու կարիք էին ունենում: Օպերատոր Սարիկ Մարտիրոսյանը, ով տեսագրում էր անում Կապանի 38/03 ընտրատեղամասում, մեզ հետ զրույցում պարզաբանեց, որ երբ նկատում է որեւէ խախտում, ապա դա նկարահանում է, որպեսզի այն հետագայում ծառայի փաստացի ապացույց: Իսկ ահա 38/05 տեղամասում, որը տեղակայված էր Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում, տեսագրվել է ընտրությունների ողջ ընթացքը:

Թե որքանով է այդ գործողությունը երաշխիք հանդիսացել արդար ընտրությունների անցկացման համար, դժվար է ասել, քանի որ մինչ այժմ նախաձեռնության հեղինակները որեւէ հայտարարությամբ հանդես չեն եկել:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

№ 13 254
15 ՄԱՅԻՍԻ 2012

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2012

Շապ էին ուրիշի օգնությամբ քվեարկողները

ՔԱՋԱՐԱՆ

Առավոտյան ժամը 8-ից մինչեւ երեկոյան ժամը 8-ը Քաջարան քաղաքի, Քաջարան եւ Լեռնաձոր գյուղերի ընտրատեղամասերում մարդիկ հնարավորություն ունեցան կատարել իրենց քաղաքացիական պարտքը: Քաջարան քաղաքում համամասնական ընտրակարգով քվեարկությանը մասնակցել է 4328, մեծամասնականով՝ 4179 ընտրող: Քաջարան գյուղում համամասնականով ընտրությանը մասնակցել է 140, իսկ մեծամասնականով՝ 138 ընտրող: Լեռնաձոր գյուղում համամասնականով ընտրել է 550, իսկ մեծամասնականով՝ 525 ընտրող:

Քաջարան քաղաքի 38/56 տեղամասի հանձնաժողովի նախագահ Նինա Անդրեասյանն ասաց. «Շատ մեծ ակտիվություն եմ նկատում, նույնիսկ հերթեր են գոյանում, բայց կարծում եմ, որ դա ժամանակի հետ է կապված: Մինչեւ ընդմիջում է լինում ակտիվությունը: Դեռ ոչ մի խախտում չեմ նկատել, միայն կան մարդիկ, ովքեր քվեարկելուց հետո անպայման փորձում են մի քանի հոգու զգացնել տալ, թե ում են ընտրել»: Այդ ընտրատարածքում դրսից դիտորդներ չկային, միայն տեղական դիտորդների ներկայությունը զգացինք, ովքեր էլ շատ անտարբեր էին: Քաջարան քաղաքի բնակիչ Արմենակ Օհանյանն էլ հավատում էր իր ընտրած թեկնածուին. «Ես վստահ եմ, որ անպայման իմ ընտրած թեկնածուն կանցնի, համոզված եմ, որ ճիշտ ընտրություն եմ կատարել»:

Քաջարան քաղաքի 38/55 տեղամասային կենտրոնն առավոտից նույնպես մարդաշատ էր: Հանձնաժողովի նախագահ Զոհրաբ Առաքելյանը նշեց, որ ընտրության ընթացքում դեռ խախտումներ չի նկատել, միայն մի քանի րոպեով հոսանքազրկվել է տեղամասային կենտրոնը, որը շատ արագ շտկվել է: Նույն տեղամասում ՀԱԿ-ի վստահված անձ Անուշ Հարությունյանը նշեց. «Դեռ ժամը մեկն է, բայց արդեն ուրիշի օգնությամբ քվեարկել է 45 մարդ: Կարծում եմ, որ այդ թիվը մի տեղամասի համար շատ-շատ է: Կան մարդիկ, ովքեր եկել են տեղամաս, բայց չգիտեն, թե ինչի համար են եկել, թե ինչ պիտի անեն, ուղղակի ներկայացել են: Հավելեմ, որ մենք պարբերաբար ստիպված էինք մարդկանց հիշեցնել, որ իրենց ոչ ոք չի հետեւում, իրենք ազատ կարող են կատարել իրենց ընտրությունը»: Քաջարանի երեք տեղամասում էլ ՀԱԿ-ը մայրաքաղաքից ներկայացուցիչներ էր ուղարկել: Քաղաքի 38/57 ընտրատեղամասում նկատեցինք, որ մարդկանց կուտակումներ կան, որն էլ փոքր-ինչ փորձում էին շտկել ոստիկանության ներկայացուցիչները:

Քաջարան գյուղում ընդմիջման ժամին ընտրողների հոսքը նվազել էր: Հանձնաժողովի նախագահ՝ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Սամվել Արզումանյանը նշեց, որ գրեթե բոլոր կուսակցություններից էլ կան վստահված անձինք, միայն ՕԵԿ-ից եւ «Ժառանգությունից» ներկայացուցիչներ չեն եղել: Այդ տեղամասում նկատեցինք մի քանի դիտորդների, ովքեր ակնհայտ կուսակցական կողմնորոշում ունեին:

Լեռնաձոր գյուղում ընտրողներն ակտիվորեն էին մասնակցում ընտրություններին, դեռ ժամը 2-ի դրությամբ ընտրությանը մասնակցել էր 379 հոգուց 260-ը: Այդտեղ նույնպես քվեարկելիս օգնություն ստացողների թիվը շատ էր, ժամը 3-ի դրությամբ 31 հոգու օգնություն էին ցուցաբերել: Այդ տեղամասում նույնպես դիտորդների ներկայությունը չզգացինք:

Եթե մայիսի 6-ի ընտրությունները համեմատենք 2007թ. ընտրությունների հետ, ապա կարող ենք նշել, որ մարդկանց մի մասը չի հավատում, որ իրենց կյանքը լավանալու է, կամ Հայաստանը դառնալու է համատարած բարեկեցության երկիր: Կային մարդիկ, ովքեր 2012թ. ընտրություններից ոչինչ չէին ակնկալում: Նույնիսկ չգիտեին, թե ինչ քաղաքական ուժեր են ներկայացված, ինչ ծրագրեր ու նպատակներ ունեն: Եվ նորություն չի լինի, եթե նշենք, որ շատերը չէին տարբերում, թե ինչ ասել է մեծամասնական եւ համամասնական ընտրակարգ:

ՔԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Լուսանկարը՝ Ջ.Հանքարձումյանի

6 մայիսի 2012թ. Քաջարան, թիվ 38/55 ընտրատեղամաս:

Կան նաեւ չլուծված հարցեր

Հինգերորդ գումարման խորհրդարանի ընտրությունները եւս պատմություն դարձան: Դրանք աչքի ընկան շտաբների առատությամբ եւ ընտրատեղամասերում վստահված անձանց մեծ քանակով: Բայց մեծավ մասամբ շատերի սպասելիքները չարդարացան:

Նախորդ ընտրությունների ժամանակ ընտրացուցակները միշտ խնդրահարույց են եղել, այս անգամ էլ դրանցում տեղ էին գտել մարդիկ, ովքեր վաղուց հրաժեշտ են տվել երկրային կյանքին, կամ էլ այնպիսիք, ովքեր մեկ տասնամյակից ավելի բացակայում են հանրապետությունից եւ կտրված են մեր իրականությունից: Հազիվ թե մեկն ընտրելու համար Ռուսաստանի խորքերից վեր կենա, հասնի Հայաստան՝ իր քաղաքացիական պարտքը կատարելու, նամանավանդ դա անի սրտի եւ խղճի մտոք: Հարեւաններիս (հայր, մայր, երկու որդի) անուններն անմիջապես իմից առաջ էին, ովքեր Ռյազանի մարզի քաղաքներից մեկում անվրդով կյանքով են ապրում: Իսկ ինչ երաշխիք, որ նրանց համար նախատեսված քվեաթերթիկները սահունորեն չեն մտել քվեատուփի մեջ:

Ինչպես տեղեկացրեց «Ողջի» հասարակական կազմակերպության նախագահ Կամո Դավթյանը, հաշմանդամների մասնակցությունն այս ընտրություններում մեծ է եղել, ինքն անձամբ դիմել է տարբեր կուսակցությունների շտաբներին, որոնք ավտոտրանսպորտ են հատկացրել: Բայց տակավին խնդրահարույց է մնում հեռաշարժական խնդիրներ ունեցող մարդկանց ընտրություններին մասնակցելը: Ճիշտ է, հիմնականում ընտրատեղամասերը տեղակայված են առաջին հարկերում, բայց սալյակավոր հաշմանդամների համար դժվար է տեղամաս մտնելը, քանի որ ամենուր բացակայում են թեքահարթակները:

«Ժառանգություն» կուսակցության նախընտրական շտաբը տեղակայված էր Կապանի Սպանդարյան 6 հասցեում, հետո պարզվեց, որ դա «Ազատ դեմոկրատներ» կուսակցության գրասենյակն է: «Ազատ դեմոկրատները» ընտրություններին մասնակցեց «Ժառանգություն» կուսակցության հետ դաշինք կազմած: «Ազատ դեմոկրատներ» կուսակցության պատասխանատու Սոնա Մինասյանի փոխանցմամբ՝ իրենք արձանագրել են «Ընտրական օրենսգրքի» խախտումներ, մասնավորապես Գեղանուշում գյուղապետարանը ծառայել է նախընտրական շտաբ, ինչն օրենքով չի թույլատրվում: Մայիսի 5-ին «լռության» օր էր, արգելվում էր քարոզչությունը, բայց նախընտրական շտաբների ցուցանակները հանված չէին, ինչը, նույնպես, օրենքի խախտում է համարվում:

Ակնհայտորեն նեղվածք էր ընտրական հանձնաժողովի անդամների եւ վստահված անձանց համար 38/12 տեղամասում, որ տեղակայված էր Հալիձոր թաղամասի՝ բնակելի շենքի առաջին հարկում ծվարած մանկապարտեզում: Իսկ ընտրողներն իրենք քվեարկելու հերթին էին սպասում խմբված առաջին հարկի աստիճանավանդակում եւ մուտքի աստիճաններին: 38/4 տեղամասն էլ գտնվում էր Դավիթ-Բեկ թաղամասի՝ նախկին դիսկոտեկի շենքում, դեպի ընտրատեղամաս բարձրանում են նեղլիկ աստիճանով եւ քվեարկելուց հետո իջնում նույնքան նեղլիկ երկաթե աստիճաններով: Ընտրատեղամաս այցելելը դժվարին է ոչ միայն հաշմանդամ, այլեւ տարեց ընտրողների համար: Ընտրական հանձնաժողովն ամբողջ օրն աշխատում էր էլեկտրական լույսի տակ, օդափոխություն չէր գործում: Տողերիս հեղինակը համապետական ընտրություններից մեկի ժամանակ այդ տեղամասում հանձնաժողովի անդամ է եղել: Հաշվի առնելով, որ աշնանը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն են, իսկ ավելի ուշ՝ նախագահական, ապա պատկան մարմինները լրջորեն պիտի մտածեն տարրական հարմարավետություն չունեցող այս տարածքի փոխարեն տեղամասային կենտրոնին ավելի հարմար տեղ հատկացնելու մասին:

Տպավորություն ունեցա, որ մարդկանց տնից հանել, բերել էին ընտրության: Տարեց մի կին չգիտեր մեծամասնական ընտրակարգով առաջադրվածներին, ոչ էլ պատկերացում ուներ համամասնական ցուցակի կուսակցությունների մասին: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խոհեր առաջին անգամ քվեարկելուց հետո

19 տարեկան եմ եւ առաջին անգամ մայիսի 6-ին մասնակցեցի ԱԺ ընտրություններին որպես քաղաքացի (նաեւ որպես լրագրող):

Քվեարկությունս կատարել եմ թիվ 38/3 ընտրատեղամասում, որը տեղակայված է Կապանի թիվ 7 հիմնական դպրոցում: Թե ում օգտին եմ քվեարկել, չեմ բարձրաձայնի, բայց ոչ այն բանի համար, որ վախենում եմ, այլ որ մարդիկ դրա մեջ որեւէ միտում չփնտրեն: Չեմ փոշմանել ընտրություններին մասնակցելու համար, ափսոսում եմ միայն, որ իմ քվեն չծառայեց երկրի ներկայիս դրությունը բարելավելուն: Քվեարկությունից հետո շրջեցի մի քանի այլ տեղամասերում՝ քաղաքում տիրող մթնոլորտին ծանոթանալու նպատակով: Մինչ այդ որեւէ ընտրական գործընթացի չեմ մասնակցել, սակայն շատ բաներ աչքիցս չվրիպեցին: Օրինակ, Հանրապետական կուսակցության նախընտրական շտաբի կողքով անցնելիս նկատեցի, որ մարդկանց խորհուրդ էր տրվում ընտրել համամասնական քվեաթերթիկի 7-րդ եւ մեծամասնականի 2-րդ համարի օգտին: Կամ՝ ինձ համար գոնե հասկանալի էր այն երեւույթը, թե ինչու էին ընտրատեղամասերի մոտ հավաքված մեքենաներում որոշ մարդիկ ինչ-որ ցուցակներում ներկա-բացակա անում: Նույնքան էլ պարզ էր մի բան, որ այս ընտրությունները կեղծելու համար կիրառվել է կարուսելի փորձված միջոցը, դրա մասին են վկայում քվեաթերթիկների հաշվելու ընթացքում ի հայտ եկած դատարկ ծրարները: Կային նաեւ ոչ ոքի օգտին չքվեարկած, ինչպես նաեւ հայհոյախառն արտահայտություններով քվեաթերթիկներ: Որպես ընտրական գործընթացներին նախկինում չմասնակցած քաղաքացի՝ կարող եմ ասել, որ շատ կարեւոր է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի դերն ամբողջ ընտրության ընթացքում: 38/3 եւ 38/2 ընտրատեղամասերում հանձնաժողովի նախագահներն աչքի էին ընկնում ընտրական գործընթացների իմացությամբ, կային նաեւ նախագահներ, ովքեր որոշակիորեն պասիվություն էին ցուցաբերում ընտրության ողջ ընթացքում եւ տեւական ժամանակով բացակայում էին իրենց տեղից: Հարկ է նշել նաեւ, որ դիտորդներից շատերն անուշադիր էին, որեւէ գրառում չէին անում, հենց առաջին հայացքից կարելի էր ենթադրել, թե այդ առաքելությունը կրում է սոսկ սիմվոլիկ բնույթ, իսկ երիտասարդ դիտորդների համար՝ գումար վաստակելու ցանկալի առիթ:

Բավականին մեծ թիվ էին կազմում մտավոր հետամնացները եւ հաշմանդամներն ու տարեցները, ովքեր ինքնուրույն չէին կարող քվեարկել, ուստի այդ դեպքում նրանց, ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի, պետք է օգնի մեկ այլ ընտրող: Կապանի թիվ 38/05 ընտրատեղամասում այլ անձի օգնությամբ քվեարկել է 56 հոգի, 38/03-ում՝ 20 հոգի, 38/02-ում՝ 18 եւ այլն:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 13 254
15 ՄԱՅԻՍԻ 2012

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2012

Մեր երթը՝ անգաղափար

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Սկիզբը՝ էջ 1

ժողովրդի, ազգի մասին: Օրական 24 ժամ հայոց պետականությունը վարկաբեկող ենիչերին խոսում էր պետության ու պետականության մասին: Ամենաողբերգականը, սակայն, տեղի ունեցավ վերջում: Պարզվեց, որ քաղաքական դաշտը սպասում է միջազգային դիտորդների ժպիտին, ովքեր, այնուամենայնիվ, մի թեթեւ ժպիտ շպրտեցին մեր բթացած դեմքին ու գնացին, իսկ մենք մնացինք միայնակ:

Ընտրական գործընթացները որոշ առանձնահատկություններ ու դրսեւորումներ ունեցան Սյունիքում:

Հանրապետականները Սյունիքում պահպանեցին իրենց գերիշխող դիրքը: Քվեարկության մասնակցածների մոտ 60 տոկոսն արտահայտվեց հօգուտ ՀՀԿ-ի: Բայց ՀՀԿ-ն, կարծեք, շատ բան ունի մտածելու: Նախ՝ Հանրապետականը միանգամայն այլ ցուցանիշ կունենար, եթե մոտ 20 հազար զինվորականը չքվեարկեր հենց Սյունիքում: Կապանի եւ Սիսիանի շրջաններում ՀՀԿ-ն (համամասնական ընտրակարգով) հավաքեց 50 տոկոսից պակաս ձայն: Սիսիան քաղաքի յոթ տեղամասից վեցում եւ շրջանի մի քանի գյուղերում ՀՀԿ-ն ուղղակի պարտություն կրեց: Սիսիան քաղաքում իշխանության թեկնածուն մեծամասնական ընտրակարգով ստացավ վավեր ձայների 14.4 տոկոսը: Նման նվաստացուցիչ թիվ Հայաստանի ոչ մի քաղաքում ՀՀԿ-ն չէր արձանագրել: Եվ, բնականաբար, հարց է ծագում՝ արդյո՞ք Հայկ Գրիգորյանն ավելի շատ ձայն չէր հավաքի Սիսիանում, եթե այնտեղ չստեղծվեր ՀՀԿ նախընտրական շտաբ: ՀՀԿ-ն պարտություն կրեց նաեւ Կապան քաղաքի չորս տեղամասում ու շրջանի մի քանի գյուղերում:

ԲՀԿ-ն զարմանալի առաջընթաց արձանագրեց մարզում. մոտ 19 հազար ընտրող (քվեարկությանը մասնակցածների 22 տոկոսը) ձայն տվեց այդ կուսակցությանը, ինչը մոտ երեք անգամ ավելի է, քան 2007-ի ԱԺ ընտրություններում (այն ժամանակ՝ 6688 ձայն): Կուսակցության հաջողությունն ակնհայտ էր Կապանում եւ Սիսիանում: Պատճառներից գլխավորը, անշուշտ, այն էր, որ ԲՀԿ-ն վերջին մի քանի ամսում եւ հատկապես քարոզարշավի ընթացքում որդեգրեց ընդդիմադիր եւ հակաիշխանական կեցվածք (թեեւ ինքը մինչեւ վերջին րոպեն կառավարող կոալիցիայի մաս էր կազմում): Եվ իշխանություններից դժգոհ ընտրազանգվածի զգալի մասը գնաց դեպի ԲՀԿ: Կարեւոր գործոն էր հանգամանքը, որ ԲՀԿ սյունիքյան կառույցները (հատկապես՝ Կապանում եւ Սիսիանում) ղեկավարում էին տեղական մասշտաբով ճանաչված լիդերներ: Իրադարձություն էր հատկապես Մերուժան Սիմոնյանի հայտնվելը ԲՀԿ-ի կապանյան թիմում:

Անակնկալ էր ՀՅԴ-ի հանդեպ վստահության կրկնակի նվազումը (2007-ին մարզում 9243 ձայն ստացած ՀՅԴ-ն ս.թ. մայիսի 6-ին ստացավ 4442 ձայն): Եվ դա այն դեպքում, երբ այդ կուսակցությունը ներկայացրեց ամենամրցունակ նախընտրական ծրագիրը, երբ այդ կուսակցությունն իրականացրեց ամենագրագետ քարոզարշավը, երբ այդ կուսակցության քարոզչական թիմում ընդգրկված էին լուրջ ինտելեկտուալներ՝ հանրապետությունում ճանաչում ունեցող, երբ այդ կուսակցությունը Սյունիքի N38 ընտրատարածքում առաջադրեց հանրության մեջ ակնհայտորեն դրական վարկանիշ ունեցող անձնավորության: ՀՅԴ-ի հանդեպ վստահության նվազումը նկատելի էր ամբողջ հանրապետությունում, ուստիեւ պատճառները պետք է փնտրել ոչ Սյունիքում: ՀՅԴ Սյունիքի կառույցներում, սակայն, չէր կարելի չնկատել մի լուրջ հիվանդություն, որի անունն անհամաձայնություն է կամ պառակտվածություն, իսկ որոշ մարդկանց դեպքում՝ շահամոլություն, պատեհապաշտություն:

ՕԵԿ-ը Սյունիքում պահպանեց դիրքերը, որ ունեցել էր 2007-ին: Այն ժամանակ՝ 2805 ձայն, 2012-ի մայիսի 6-ին՝ 2862 ձայն: Մայիսի 6-ը ցույց տվեց երիցս, որ կուսակցությունը համեմատաբար կենսունակ է Կապանում եւ Սիսիանում:

2007թ. ընտրությունների համեմատ մի փոքր ավելի արդյունք ունեցավ «Ժառանգություն» կուսակցությունը: Այն ժամանակ՝ 1465, հիմա՝ 2132:

Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների հոծ շարքերը, որ նկատելի էին 2007-08-ին եւ՛ Մեղրիում ու Կապանում, եւ՛ Գորիսում ու Սիսիանում, այլեւս չկային եւ, կարծեք, չեն լինի երբեք: Համեմատաբար մարտունակ է մնացել ՀԱԿ-ի Սիսիանի կառույցը, թեեւ այդ կառույցի լիդեր Քոչար Դավթյանն առողջական վիճակի պատճառով բացակայում էր հանրապետությունից:

Որոշակի առանձնահատկություններ ունեցավ մեծամասնական կարգով ընտրությունը մարզի ընտրատարածքներում:

N37-ի նախընտրական ամբողջ ընթացքը ցույց տվեց, որ կուսակցություններից, գաղափարներից, ծրագրերից վեր կա մեկ այլ գործոն. դա տեղայնական մտածելակերպն է, տեղային հայրենասիրությունը: Իհարկե, գնահատելի էր, որ Սիսիանը համախմբվել է պատգամավորության թեկնածու Թաթուլ Հակոբյանի շուրջ: Բայց տարօրինակ էր, որ Սիսիանում Թաթուլ Հակոբյանի գլխավոր արժանիքը համարում էին նրա՝ սիսիանցի լինելը: Այդ «գաղափարախոսության» նախաձեռնողներն ու կրողները մինչեւ վերջ այդպես էլ չհասկացան, որ իրենց մոգոնած այդ մարտավարությունն էլ պիտի դառնա եւ դարձավ Թաթուլ Հակոբյանի պարտության գլխավոր պատճառը: Հենց այդ «գաղափարախոսությունն էր», որ արթնացրեց Գորիսն ու այն (գոնե մեծամասնական ընտրությունների հարցում) դարձրեց միաբեւեռ: Մոտ 20 տարի իր բնօրրանում կայուն ընտրազանգված ունեցող Սամվել Հարությունյանն անգամ Գորիսում մերժվեց աննախադեպ դաժանությամբ: Եվ հաղթեց Հայկ Գրիգորյանը, ով քարոզարշավի վերջին երկու-երեք օրվա ընթացքում իշխանության թեկնածուից վերածվեց (սիսիանյան «գաղափարախոսության» դրդմամբ) Գորիսի թեկնածուի:

N38 ընտրատարածքում մրցապայքարն իր առանձնահատկություններն ունեցավ: Քվեարկության թվային արդյունքները, անշուշտ, կարեւոր են: Բայց այդ ընթացքում արձանագրվեցին նաեւ ուշագրավ այլ իրողություններ: Ահավասիկ, Քաջարան գյուղը: Մոտ մեկ տարի Մաքսիմ Հակոբյանի դեմ ըմբոստացած եւ իրենց գյուղի տարածքի պաշտպանության համար ոտքի ելած քաջարանցիների (քվեարկությանը մասնակցել է 138 հոգի) 61 տոկոսը (83 հոգի) քվեարկեց հօգուտ նրա որդի Վահե Հակոբյանի: Քաջարան գյուղի բնակիչները մի փոքր ավելի զուսպ գտնվեցին համամասնական ընտրակարգով քվեարկելիս. ՀՀԿ-ին ձայն տվեց գյուղացիների 42.9 տոկոսը: Քաջարան քաղաքի մասին. քվեարկությանը մասնակցած 4328 քաջարանցիների մոտ 30 տոկոսը դեմ արտահայտվեց ՀՀԿ-ին: 481 քաջարանցի դեմ արտահայտվեց Վահե Հակոբյանին (11.5 տոկոս): Մեղրու շրջանի մասին. միայն 18 տոկոսը քվեարկեց Դավիթ Մաթեւոսյանի օգտին: Ուշագրավ էր նաեւ հանգամանքը, որ Վահե Հակոբյանի օգտին քվեարկած մարդկանցից ոչ բոլորը քվեարկեցին ՀՀԿ-ի օգտին: Գագիկ Գեւորգյանի դեպքում եւս կատարվեց նույնը, շուրջ 3500 ընտրող նրան մոտեցան վերկուսակցական դիրքերից:

Սյունիքի մարզի ամեն մի շրջան նույնպես ունեցավ իր յուրահատկությունները: Դրանց առանձին-առանձին քննարկումն աննպատակահարմար է: Մեկ-երկու նկատառում, այդուհանդերձ, չենք կարող չասել Սիսիանի առնչությամբ: Հարցերի հարցը հետեւյալն է՝ ինչո՞ւ ՀՀԿ-ն եւ՛ համամասնական, եւ՛ մեծամասնական ընտրակարգով հայտնվեց այդքան ծանր վիճակում: Մեծամասնականի մասին ասվեց՝ սիսիանցի ընտրողների մոտ 70 տոկոսը միավորվեց Թաթուլ Հակոբյանի շուրջ, ինչի խորքում նախեւառաջ տեղային հայրենասիրությունն էր, որը կարող էր եւ գերիշխող գործոն չդառնալ, եթե մյուս թեկնածուները (այդ թվում՝ Հայկ Գրիգորյանը) ըստ պատշաճի ներկայացվեին հանրությանը: Բա համամասնա-կա՞նը: Ինչո՞ւ ՀՀԿ-ն Սիսիանում հավաքեց 50 տոկոսից պակաս ձայն, իսկ որոշ տեղամասերում ջարդուխուրդ եղավ, չնայած այնտեղ նաեւ զինվորականներ էին քվեարկում: Պատճառը, ըստ էության, ՀՀԿ-ի սիսիանյան թիմի պառակտվածությունն էր: Որոշ ՀՀԿ-ականներ շատ ջանք գործադրեցին, որպեսզի ցույց տան Աշոտ Մինասյանին նախընտրական շտաբի պետ կարգելու սխալականությունը, ինչը, կարծեք, հաջողվեց: Եթե ՀՀԿ Սիսիանի նախընտրական շտաբին չէին բավարարում միասնությունն ու նպատակասլացությունը, ապա Կապանի նախընտրական շտաբին չէին բավարարում մտահասությունը, գործարարությունը, ստից եւ ձեւականությունից հրաժարվելու կարողությունը: Կապանի շտաբում այդ օրերին շատերն էին հիշում հանգուցյալ Ռուբեն Սարգսյանին, ում տեղն այս անգամ շտաբում զբաղեցրել էր, ինչպես գրված էր կապանյան վերջին թռուցիկներից մեկում, «բոլոր պաշտոններում ձախողված մի պաշտոնամոլ»: «Կապանը մերն է» ստորագրությամբ այդ թռուցիկում, ի դեպ, ՀՀԿ-ի կապանյան շտաբի որոշ անդամներ ուշագրավ բնութագրումների էին արժանացել, ինչի մասին բարձրաձայն խոսելն ուղղակի ամոթ է:

…Հիմարություն է կարծել, որ նոր ԱԺ-ի գործունեությամբ երկրում փոփոխություններ տեղի կունենան, մանավանդ որ ժողովուրդը չքվեարկեց փոփոխությունների, նոր կուրսի օգտին, մանավանդ որ հինգերորդ գումարման Ազգային ժողովը բոլոր առումներով ավելի թույլ կլինի, քան նախորդը: Մեծամասշտաբ հետընտրական վերադասավորումներ չեն լինի նաեւ Սյունիքում, թեեւ անխուսափելի է «սառը պատերազմի» էսկալացիան որոշ քաղաքական ուժերի եւ տեղական կլանների միջեւ, ինչը հատկապես կերեւա մեկ-երկու ամսից մեկնարկող ՏԻՄ ընտրություններում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ազատամարտիկի քարեղեն կերպարը՝ անհարկի շահարկումների առարկա

Արցախյան գոյակռվի նահատակ Վուրգ Ոսկանյանի հուշարձանի շուրջ շահարկումները մայիսի 5-ին հասել էին գագաթնակետին

Սկիզբը՝ էջ 1

կորսված բաղադրիչները վերականգնելու փաստը՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, այնուամենայնիվ, կոչ արեց Վուրգի մերձավորներին, զինակիցներին ու համայնքային իշխանությանը՝ հուշարձանի տեղադրումն իրականացնել մայիսի 7-ից հետո՝ ըստ պատշաճի, կատարել հանդիսավոր բացում՝ նրա մարտական ընկերների եւ երկրի պաշտպանական գերատեսչության ղեկավարների մասնակցությամբ: Այդ կարծիքին էին նաեւ Սիսիանի երկրապահի լիդերներից Աշոտ Մինասյանը, Արայիկ Վարդանյանը եւ բազմաթիվ (բայց ոչ բոլոր) երկրապահներ:

Օրվա երկրորդ կեսին, սակայն, հուշարձանն արդեն տեղափոխվել էր Ազատամարտի հրապարակ: Այնտեղ հավաքված 100-150 հոգին, ինչպես արդեն նշեցինք, բաժանված էր երկու ճամբարի: Մի մասը կարծում էր, որ համապետական միջոցառման նախօրյակին հուշարձանի տեղադրումը զուտ քաղաքական ակցիայի տպավորություն է թողնում, ինչը վիրավորական է ազատամարտիկի հիշատակի համար, որ հուշարձանի տեղադրումը պետք է կատարել մայիսի 7-ից հետո՝ շուքով: Մարդկանց մյուս մասն էլ պնդում էր (դրանց մեջ գերակշռում էին երկրապահականները), որ հենց այսօր պետք է տեղադրել հուշարձանը, քանի որ ամիսներ շարունակ (առանց լուրջ պատճառաբանության) ձգձգվել է խնդրի լուծումը:

Մթնոլորտն այնքան էր շիկացել, որ Ազատամարտի հրապարակ ժամանեցին տեղի ոստիկանները՝ ոստիկանության բաժնի պետ Գուրգեն Բեգլարյանի գլխավորությամբ: Ստեղծված կացության մասին իրազեկ է պահվել նաեւ երկրի նախագահը: Իրավիճակը, իհարկե, մնաց կառավարելի, եւ ծայրահեղություններ տեղ չգտան, բայց, ի վերջո, հուշարձանը տեղադրվեց (հուշարձանը տեղադրելուն կողմնակից էին նաեւ Վուրգի հարազատները՝ հայր ու որդի Արարատ եւ Աշոտ Ավագյանները): Այդ ամենից հետո կրքերը հանդարտվեցին: Դեռեւս չամրացված հուշարձանի պատվանդանը մեկ ժամ հետո ծածկված էր ծաղիկներով: Արցախյան ազատամարտի նահատակին հարգանքի տուրք մատուցելու էին գալիս սիսիանցիները…

Հուշարձանը տեղադրելուց առաջ, սակայն, հրապարակից հեռացան քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը՝ իր աշակերտներով, եւ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը: Մեր ունեցած տեղեկություններով՝ հուշարձանի տեղադրման շուրջ ծավալված բանակռվի ամենաթեժ պահին Սիսիանի քաղաքապետին զանգահարել են նախագահականից: Նրան հանդիմանել են եւ մեղադրել նահատակ ազատամարտիկի անունը նախընտրական նպատակով շահարկելու մեջ, ինչը փորձել է հերքել Աղասի Հակոբջանյանը եւ տեղի ունեցողը համարել սիսիանցիների կամքի արտահայտություն:

Մայիսի 5-ին Սիսիանում կատարվածը, անշուշտ, մի քանի ենթատեքստ ունի, որոնց անդրադառնալն այլեւս անիմաստ է: Մի բան, սակայն, չենք կարող չասել՝ իշխանությունը պահելու կամ իշխանության հասնելու համար պայքարի բոլոր ձեւերը մեզանում արդարացված են, ինչը ցավալի է, ինչը մեր համընդհանուր պարտության մասին է խոսում: Ինչպես մարտական ընկերներն են վկայում, իր էությամբ հանդարտ, խաղաղ, համերաշխության ձգտող Վուրգ Ոսկանյանը, որն իսկապես հայրենիքի նվիրյալ էր, արժանի չէր նման աղմկահարույց պատմության: Վուրգի հուշարձանը պետք է դառնար ոչ թե երկփեղկվելու, այլ մեկտեղվելու, ուժեղանալու, համերաշխվելու խորհրդանիշ, թեեւ, համոզված ենք, այդպես էլ կա ու կլինի…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

№ 13 254
15 ՄԱՅԻՍԻ 2012

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Սյունյաց երկիր

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2012

Եթե դա է մեր իրականությունը, ուրեմն Հայաստանում պիտի ընտրություններ չլինեն

«Առաջին լրատվական»-ի զրուցակիցն է փիլիսոփայության դոկտոր, սոցիոլոգիայի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանը:

– Խորհրդարանական ընտրությունները տեղի ունեցան, իշխող կուսակցությունն էլ ավելի մեծացրեց իր ներկայությունն Ազգային ժողովում եւ այս ամենը ժողովրդի համատարած դժգոհության պայմաններում: Ձեր կարծիքով ի՞նչ տեղի ունեցավ, ի՞նչ ընտրություններ էին մայիսի 6-ին:

– Հերթական խորհրդարանական ընտրություններ էին՝ ինչ ցանել էինք, այն էլ հնձեցինք:

– Այսինքն՝ այս արդյունքները սպասելի՞ էին:

– Այո՛, ես սպասում էի նման արդյունքների, իհարկե, այսքան մեծ թվեր չէի սպասում, բայց որ ՀՀԿ-ն կավելացնի իր ներկայությունը, սպասելի էր: Ավելին՝ ես մտահոգ էի, որ ԲՀԿ-ն ավելի շատ ձայներ կվերցնի, բայց հիմա, երբ ՀՀԿ-ն է վերցրել շատ ձայներ, հասկանալի է, թե ինչ է տեղի ունեցել: Ես կարծում եմ, որ դրամի լծակը գումարվեց վարչական լծակին, եւ ավելի հզոր արդյունք ստացվեց: Կար մի հետաքրքիր պարադոքս այս ընտրություններում՝ պահպանողական դաշտում գործում էին մի քանի կուսակցություն, այն դեպքում, երբ Հայաստանում շատ քիչ են պահպանողական տրամադրված ընտրողները, քանզի հայ ընտրողը փոփոխությունների պահանջ ունի եւ չի նախընտրում պահպանողական գաղափարախոսությունը:

– Այսինքն՝ ըստ Ձեզ՝ կուսակցությունների ներկայացրած գաղափարախոսությունն ու ընտրողների ակնկալիքները չէին համապատասխանում:

– Այս ընտրությունների քարոզարշավը լի էր պարադոքսներով, եւ դրանցից հենց առաջինը վերը նշվածն է, որ ունենալով փոփոխությունների միտված ընտրող՝ մենք ունենք բավականին շատ պահպանողական գաղափարախոսություն ներկայացնող կուսակցություններ: Ճիշտ է, ՀՀԿ-ն լինելով պահպանողական կուսակցություն, առաջ քաշեց «Հավատանք, որ փոխենք» կարգախոսը, ինչը բնական է. պահպանողական կուսակցությունն ուժեղ իշխանության եւ իր իշխանության ամրապնդման կողմնակից է: Երբ նման ուժը հանդես է գալիս «Հավատանք, որ փոխենք» կարգախոսով, նշանակում է, որ այդ ուժը գիտի, որ մեծ արդյունքների չի հասել, եւ մարդիկ փոփոխություն են ուզում: Մյուս պարադոքսն էլ այն է, որ փոփոխությունների մասին խոսում էր «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը եւս պահպանողական դիրքերից է հանդես գալիս եւ մեծ կապիտալի կուսակցություն է: Այդ կուսակցությունը եւս խոսում էր փոխելու մասին այն դեպքում, երբ ինքը սկզբունքորեն չի կարող ցանկանալ եւ չի էլ ցանկանում ներկայիս՝ խոշոր կապիտալի պահպանման համար բավականին բարենպաստ պայմանների փոփոխություն: ԲՀԿ-ի գաղափարախոսական հենքում եւս դրված է պահպանողականությունը, բայց ի տարբերություն ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի պահպանողականությունն անգլո-սաքսոնական տիպի պահպանողականություն է, որն առաջ է քաշում նվազագույն պետություն գաղափարը: Անգլո-սաքսոնական պահպանողականությունը սոցիալական պետության ընդդիմադիրն է: Այս տիպի պահպանողականության գաղափարախոսությունը մոտ է դասական լիբերալիզմի գաղափարախոսությանը, որն առաջ է քաշում ՀԱԿ-ը, եւ հենց այս կապն է, թերեւս, ՀԱԿ-ԲՀԿ համագործակցության համար հիմք հանդիսացել: ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ առկա մրցակցության արդյունքն էր, որ ԲՀԿ-ն մաս դարձավ ընտրությունների վերահսկման միասնական շտաբի: Իհարկե, պարադոքս է, որ ԲՀԿ-ն, որը վերջին տարիների ընթացքում ակտիվորեն «գնում» է ընտրողին եւ ռեկորդներ է սահմանում, կեղծ «բարեգործության» առումով միացել էր ընտրություններն ազատ եւ թափանցիկ անցկացնելու նախաձեռնություններին: Մյուս պարադոքսը ՀՀԿ առաջնորդ Սերժ Սարգսյանի հպարտ միայնությունն էր, նախագահն իր ուսերի վրա տարավ ամբողջ քարոզարշավի ծանրությունը: Հնարավոր է՝ նա այդպես արեց, որովհետեւ գիտեր, որ իր անձնական վարկանիշն ավելի բարձր է, քան Հանրապետական կուսակցության վարկանիշը:

Ես չեմ կարծում, որ ընտրողների մեծամասնությունն իր ձայնը տվեց Հանրապետականին, որովհետեւ հավատաց, որ նրանք փոփոխություն են բերելու: Ո՛չ, դա միամտություն կլիներ, ես կարծում եմ, որ հասարակությունն անգամ չարձագանքեց ՀՀԿ կարգախոսին, բայց շատ ցանկալի կլիներ, որ արձագանքեր, քանզի այդ դեպքում ՀՀԿ-ից հասարակությունը համառորեն փոփոխություն կպահանջեր: Կարծում եմ, որ ՀՀԿ-ն այժմ գոնե իր ձեռագիրը ստիպված կլինի փոխել ու եթե առաջ իր իշխանությունը կիսեց պահպանողական ԲՀԿ-ի եւ ՕԵԿ-ի հետ, ապա այս անգամ կգործի այլ բանաձեւով: Ընտրության արդյունքը կստիպի որդեգրել իշխանության բաժանման մեկ այլ բանաձեւ, որն ասում է. «Հաղթողները վերցնում են ամեն ինչ»:

– Դուք նշում եք, որ ՀՀԿ-ն պետք է այլ բանաձեւ որդեգրի, բայց այսօր ամենաարդիական թեման այն է, թե արդյոք ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն կկազմեն կոալիցիա: Ըստ Ձեզ՝ կոալիցիա չի՞ լինի:

– Ցանկալի կլիներ, որ չլիներ կոալիցիա, բայց շատ հավանական է կոալիցիայի ձեւավորումը, քանզի ՀՀԿ-ին ձեռնտու է կիսել պատասխանատվությունը, բայց հենց նույն ՀՀԿ համար ավելի լավ կլինի չկիսել այդ իշխանությունը:

– Ձեր գնահատմամբ, այն արդյունքները, որոնք այսօր տեսնում ենք, որեւէ աղերս ունե՞ն գաղափարական պայքարի հետ:

– Արդյունքները որեւէ կապ չունեն գաղափարախոսության հետ: Սակայն, ըստ իս, ընդդիմադիր ուժը, որն այդքան քիչ ձայն ստացավ, լրջորեն պետք է վերանայի իր բառապաշարը, քանզի այն մեսիջները, որոնք նա ուղարկում էր ընտրողին, ոչ մի տեղ չեն հասնում: Շատ լուրջ փոփոխությունների կարիք կա քաղաքական դիսկուրսում, պարզ է, որ այն չի ազդում ընտրողի վրա, ընտրողը չի ընկալում ասածը:

– Բայց, ըստ Ձեզ, այս պայքարում ճիշտ մեսիջներ ուղարկելը որեւէ ազդեցություն կունենա՞ր, երբ շատ հստակ գործում էր ընտրակաշառքը: Դա է ամենալուրջ խնդիրը:

– Եթե մարդիկ միայն ընտրակաշառքով են ընտրում, ուրեմն ընտրությունները պետք է վերացնել եւ հրաժարվել ընտրությունները որպես իշխանափոխության գործիք կիրառելու պրակտիկայից: Եթե դա է մեր իրականությունը, ուրեմն Հայաստանում պիտի ընտրություններ չլինեն: Ես ուզում եմ հավատալ, որ ընտրողների ինչ-որ տոկոս ամեն դեպքում լսում է կուսակցությունների ուղարկած մեսիջները, քանզի Հայաստանում կան նաեւ մարդիկ, ովքեր գրագետ են եւ չեն գնվում:

– Բայց չէ՞ որ իրավիճակը ցույց է տալիս, որ ընտրակաշառքով ընտրողները գերակշռում են:

– Այդ դեպքում սրա անունն ընտրություն չէ, որ պետք է լինի, այս ամենի անունը շուկա է, ու ավելի լավ է խորհրդարանի տեղերն աճուրդի հանվեն ու վաճառվեն, նման առաջարկ արդեն հնչեցվել է: Իրոք, եթե շուկայական հարաբերությունների վրա է կառուցված այս ամբողջը, ապա աճուրդ հայտարարելը ճիշտ կլինի. եւ՛ բյուջեն կլցվի, եւ՛ մեր բարոյականությունը չի տուժի: Բայց ես կարծում եմ, որ, այնուամենայնիվ, քաղաքական ուժերը պետք է վերանայեն իրենց գործելաոճը եւ մեսիջները: Ամեն կուսակցություն ինքը պետք է լուրջ քննարկի իր անհաջողության պատճառը եւ իր վրա վերցնի պատասխանատվություն նաեւ ազգի բարոյական կերպարի համար:

– Տիկին Հարությունյան, այսօր դրված է նաեւ հարց, թե արդյոք ընդդիմադիրները, որոնք շատ քիչ ձայն են ստացել, պե՞տք է վերցնեն մանդատները, թե՞ ոչ: Ձեր կարծիքով ո՞րն է ճիշտ ճանապարհը՝ վերցնե՞լ մանդատները, թե՞ հրաժարվել դրանցից:

– Իհարկե, մանդատները վերցնելը ճիշտ է, երկընտրանք մենք այսօր չունենք: Չվերցնել՝ նշանակում է լրիվ հանձնվել եւ անվերջ ու անհույս քաղաքական ճգնաժամ ձեւավորել: Այո՛, հնարավոր է՝ նաեւ կրկնակի ընտրություններ լինեն, բայց դա միայն օգուտ է փող աշխատողների համար, ոչ ավելին: Ես հուսով եմ, որ խորհրդարան անցած ընդդիմադիրների միջեւ համագործակցություն կծավալվի, քանզի նրանք բոլորն էլ տեսան, որ իրենք բոլորն են պարտված, որ միահամուռ են պարտվել, եւ առաջին հերթին երկիրն է պարտվել, երկրի ճակատագիրն է հարցականի տակ:

– Բայց ոչ այնքան ՀՀԿ, որքան ՕԵԿ-ի ստացած ձայներն են զարմանքի առիթ հանդիսանում, որովհետեւ չկա մեկը քաղաքական դաշտում, որ չխոսի այն մասին, թե ՕԵԿ-ը գոյություն չունեցող կուսակցություն է, եւ չգիտես՝ որտեղից այդ կուսակցությունը հաղթահարում է 5 տոկոսի շեմը:

– ՕԵԿ-ը գաղափարախոսական սեփական նիշա չունի եւ նստած է պահպանողական նիշայի վրա՝ ԲՀԿ-ից հետո, այսինքն՝ պետք է ապրեր ԲՀԿ ձայների հաշվին, բայց այդպես չեղավ, եւ հավանական է, որ ՕԵԿ համար աշխատել է կուսակցության լիդերի պաշտոնը:

– Կա նաեւ կարծիք, որ ՕԵԿ ձայները գոյացել են ի հաշիվ մյուս ընդդիմադիրների:

– Չեմ կարծում, Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀԱԿ ամփոփիչ հանրահավաքի ժամանակ կոչ արեց որեւէ ձայն չտալ ՀՀԿ-ին եւ ՕԵԿ-ին, այսինքն՝ ՕԵԿ-ն ընդդիմադիր ձայն չի հավաքել, այլ պարզապես գնել է ձայները: Ընդդիմադիրների հաշվին ձայներ հավաքել է ԲՀԿ-ն: ԲՀԿ-ն է ստացել ընդդիմադիր ձայներ, հենց այստեղ են երեւում ՀԱԿ-ի սխալները, երբ ՀԱԿ-ը սկսեց համագործակցել, մանեւրել ԲՀԿ հետ՝ «իմ թշնամու թշնամին իմ ընկերն է» սկզբունքով, ԲՀԿ-ն շահեց: Իսկ ՀԱԿ-ը ձայներ կորցրեց:

– Ի՞նչ եք կարծում, հիմնական մասնակիցներին թույլ տալով հաղթահարել 5 տոկոսի շեմն ու անցնել խորհրդարան՝ արդյո՞ք նշանակում է, որ իշխանությունները ցանկացան խուսափել հետընտրական զարգացումներից:

– Չեմ կարծում, որ այս ընտրություններն իշխանություններն են տվել արդյունքը: Ձայների հաշվարկը շատ չի կեղծվել, կարծում եմ, որ ընտրողների թիվն է ավելացվել: ՀԱԿ-ին ընտրել է արմատական ընդդիմությունը, «Ժառանգությունը» ստացել է իր աշխատանքի դիմաց, քանզի աշխատող կուսակցություն է եւ դրա դիմաց ստացել է իր նվազագույն ձայները, Դաշնակցության քիչ ձայները զարմանալի է, եւ նրանք լուրջ պետք է մտածեն եղածի շուրջ, քանզի սա տխուր երեւույթ է, եւ նշանակում է, որ ազգայնական, հայրենասիրական լիցքով ընտրողը պակասել է Հայաստանում: Այն, որ ՀՅԴ-ն, Միավորված հայերն ու Կոմկուսը ձայներ չեն ստացել, նորմալ է, որովհետեւ չկա գաղափարախոսություն՝ չկա ընտրող:

– Տիկին Հարությունյան, կա կարծիք, որ եթե առաջիկայում ԲՀԿ-ն կոալիցիայի առաջարկ ստանա ՀՀԿ-ից եւ այն ընդունի, կչեզոքանա վերջնականապես, բայց եթե նման բան չեղավ, եւ ԲՀԿ-ն չգնաց կոալիցիայի, ապա դա կլինի քայլ դեպի 2013-ի նախագահական ընտրություններ եւ կնշանակի, որ ԲՀԿ-ն սեփական թեկնածուով է գնալու ընտրությունների:

– Կարծում եմ՝ ԲՀԿ-ն պետք է գաղափարախոսական խնդիր լուծի եւ աշխատի իր ընտրողի համար, ոչ թե շարունակի ՀՀԿ հետ նույն ընտրողի վրա աշխատել: Ես համոզված եմ, որ ՀՀԿ-ն պետք է պահպանողականությունը տա ԲՀԿ-ին, իսկ ինքը դառնա ռեֆորմիստական կուսակցություն՝ քարոզի նորացված Հայաստանը եւ ռեֆորմներ:

– Բայց դրա հավանականությունն ինչքանո՞վ է իրական՝ հաշվի առնելով այն հաշվարկները, որոնցով առաջ են շարժվում այդ կուսակցությունները:

– Կարծում եմ, որ դրա հավանականությունը շատ մեծ է, որովհետեւ ՀՀԿ-ն արդեն մի քայլ արել է ու փոխելու հայտ է ներկայացրել, ասել է թե՝ հաջորդ քայլն այդ կուսակցության տեղի ճշգրտումն է, պահպանողական դաշտը պետք է տալ ԲՀԿ-ին, ազգայնականը՝ ՀՅԴ-ին: Ի դեպ, Դաշնակցությունն այս ընտրությունում լավ աշխատեց, բայց ըստ արժանվույն չգնահատվեց: Իրենք միշտ իրենց տասը տոկոսն ունեցել են, բայց այս անգամ, թերեւս, սա նշանակում է, որ դաշնակցական գաղափարախոսության նվիրյալները պակասել են, գնացել են երկրից: Ինձ համար ամենազարմանալին դաշնակցականների տոկոսն էր: Թվում էր, թե դաշնակցականները մեծացրել են իրենց սոցիալական բազան՝ ի հաշիվ կոմունիստների ու հետեւաբար պետք է շատ ավելի ձայն հավաքեին:

Ինչ վերաբերում է ժողովրդավարական գաղափարախոսությանը, ապա այն պետք է ամբողջապես վերցնեն «Ժառանգությունը», «Ազատ դեմոկրատները» եւ ՀԱԿ-ը: Նրանք արդեն այս նիշայի մի մասը վերցրել են ու կշարունակեն այդ գործը: Բայց այստեղ լիդերների խնդիր կա, քանզի լիդեր-կուսակցությունները փակում են քաղաքական դաշտի կոնսոլիդացիայի հնարավորությունը: Ակնհայտ է, որ այդ կուսակցությունները պետք է ուժեղացնեն քաղաքական դաշտի դեմոկրատական թեւը, «Ժառանգությունը» պետք է դադարի այս ու այնտեղ հրդեհներ մարելը եւ պետք է դառնա ժողովրդավարական ուժերի լուրջ կոալիցիայի մաս, քանզի Հայաստանը նման կոալիցիայի կարիքն ունի:

– Արդեն պարզ է, թե որ ուժերն են ներկայացնելու 5-րդ գումարման Ազգային ժողովը, այդ ամենից ելնելով, ըստ Ձեզ, այս խորհրդարանը նախորդի հետ համեմատած տարբերվո՞ւմ է:

– ՀՀ Ազգային ժողովը երբեք ուրիշը չի դառնա, որովհետեւ մեր ժողովուրդը չի փոխվում, մեր ժողովուրդը պահանջատեր չի դառնում: Հնարավորությունը ես կապում եմ ԲՀԿ հետ, այդ կուսակցությունը զգացել է իր բազկի ուժը՝ 30 տոկոսը քիչ չէ, ու դրանից ելնելով ԲՀԿ հավակնություններն են ավելանալու, այն հնազանդ «Բարգավաճն» այլեւս չկա, կուսակցությունը կփոխի իր իմիջը եւ գործելաոճը: Ինչ վերաբերում է ընդդիմադիրներին, ապա նրանք կլինեն փոքրաթիվ դինամիկ հատված, որը կստիպի Ազգային ժողովին արթնանալ եւ քայլել: Ես չեմ կարծում, որ այդ հատվածը կկարողանա որակապես փոխել խորհրդարանի աշխատանքը: Խորհրդարանը, որի պատգամավորների մեծ մասը փողի ուժով է դարձել պատգամավոր, չի կարող դառնալ հեղափոխական կամ ինտելեկտուալ խորհրդարան: Պարզ է, որ այն ժողովրդի պատվերը չի կատարելու, չէ՞ որ նա ժողովրդին արդեն գնել է: Ժողովուրդն այս ընտրություններով իր իշխանությունը վերջնականապես կորցրել է, սա շատ տխուր երեւույթ է: Ժողովուրդը տվեց իր բաժին իշխանությունը՝ առանց կոնտրակտ-պայմանագիր կնքելու, ուղղակի տվեց եւ վերջ, հետ վերցնել չի կարողանա: Եթե հասկանար, հնարավոր է չտար, բայց տվեց:

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ԱԶԱՏԱՆԱՎԵՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 13 254
15 ՄԱՅԻՍԻ 2012

Մայիսյան հաղթանակի 20-րդ տարեդարձը

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Երկու տասնամյակ առաջ հայ ազատամարտիկները, հայոց բանակի հրամանատարության մշակած աննախադեպ օպերացիայի շնորհիվ ազատագրեցին հինավուրց Շուշին, կրկին ղողանջեցին Ղազանչեցոց Սբ Ամենափրկիչ եկեղեցու զանգերը: Հոբելյանը մի առիթ է գնահատանքի խոսքեր ասելու մերօրյա պատերազմի մասնակիցների մասին, ովքեր պատվով տարան զինվորի՝ իրենց բաժին ընկած դժվարին, բայց պատվավոր խաչը: Նրանցից մեկն Արարատ Մանուչարյանն է:

Ծննդավայրը Կապանի շրջանի Արծվանիկ գյուղն է, հասակ է առել մտավորականի ընտանիքում: Գերազանց առաջադիմությամբ ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը. ինժեներ-մեխանիկի մասնագիտություն ստացել Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտում եւ բուհում ստացած գիտելիքները սկսել է կիրառել գյուղի կոլտնտեսությունում, իսկ 1991 թվականից ղեկավարել է «Արծվանիկ» գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը:

Հարեւան հանրապետության կողմից մեզ պարտադրված պատերազմը շատերի կյանքի ընթացքը փոխեց: 1992-ին Արարատ Մանուչարյանը մարտական գործողություններին նախ մասնակցեց որպես դասակի հրամանատար, իսկ 1993թ. նշանակվեց 84029 զորամասի գումարտակի հրամանատարի տեղակալ, 1994թ. նույն գումարտակի հրամանատար, 1995թ. 54122 զորամասի գումարտակի հրամանատար:

Արարատ Մանուչարյանը 1989-94թթ. մասնակցել է Կապանի շրջանի սահմանամերձ գյուղերի հարավ-արեւելյան սահմանների պաշտպանությանը, Կուբաթլուի, Զանգելանի, Զաբրաիլի, Ֆիզուլիի, Հորադիզի ուղղությամբ մղվող մարտական գործողություններին: Անձամբ մասնակցել է մի շարք բնակավայրերի՝ թշնամու կողմից գնդակոծվող կրակակետերի ոչնչացմանը, մարտական համարձակ գործողությունների ղեկավարմանն ու իրագործմանը, ցուցաբերելով հմտություն ու խիզախություն:

Ավագ լեյտենանտ Արարատ Մանուչարյանը նախ կամավորական ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար էր: Նա զինվորական կոչումը /լեյտենանտ/ ստացել է բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակ: Շատ շուտով ինքնապաշտպանական ջոկատը ընդգրկվեց ռազմաճակատում գործող բանակի կազմում եւ համալրվելուց հետո վերակազմավորվեց դեսանտագրոհային գումարտակի՝ ԴՇԲ:

Համառ մարտերի ժամանակ գումարտակի գործողությունները հմտորեն վարելու եւ մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար Ա.Մանուչարյանին շնորհվեց մայորի կոչում:

1994թ. հունվարի 6-ն ամենածանրն էր: Գումարտակը մարտեր էր մղում հարավարեւելյան ռազմաճակատի՝ Հորադիզի ուղղությամբ: Հունվարի 26-ին հակառակորդի մեծաքանակ ուժերը՝ ռազմական տեխնիկայի աջակցությամբ նետվեցին գումարտակի պաշտպանական դիրքերի վրա: Գումարտակի պաշտպանական շրջանակը մեծանում էր, բայց գումարտակի մարտիկները շարունակում էին խիզախորեն դիմադրել եւ համառությամբ կասեցնել թշնամու մեծաքանակ զինուժի առաջընթացը: Թշնամին ստիպված էր նահանջել իր նախկին դիրքերը՝ նույնիսկ չհասցնելով տեղափոխել մարտերում զոհված եւ վիրավոր զինվորներին:

Եկավ 1994թ. ապրիլի 6-ը: Հակառակորդն այս անգամ ավելի մեծաթիվ ուժերով լայնածավալ հարձակում կազմակերպեց գումարտակի պաշտպանական դիրքերի վրա, նպատակ ունենալով գումարտակը գցել շրջափակման մեջ, գրավել Հորադիզը, ապա անցնել Զանգելան եւ աքցանի մեջ առնել Սյունիքը: Գումարտակի հրամանատար Ա.Մանուչարյանը, քաջ գիտակցելով թշնամու խարդախ պլանները, գումարտակը համալրեց նոր, թարմ ուժերով, բերեց մարտական պատրաստության, հանկարծակի անցան հակահարձակման, որի շնորհիվ ոչնչացվեցին թշնամու կարեւոր հենակետերը: Թշնամին հետ շպրտվեց իր դիրքերից՝ թողնելով տեխնիկայի եւ մարդկային մեծ կորուստներ: Այստեղ ավարտվեց Մայիսյան հերոսամարտը մեր քաջարի զինվորների հաղթանակով: Ժամացույցի սլաքը կանգ առավ: Կնքվեց զինադադար, որը շարունակվում է մինչեւ այսօր:

Ա.Մանուչարյանի հրամանատարությամբ գործող գումարտակը փայլուն կատարեց հրամանատարության բոլոր առաջադրանքները, որի շնորհիվ արժանացավ բրիգադի հրամանատարության բարձր գնահատականին, իսկ գումարտակի հրամանատար Ա.Մանուչարյանը ցուցաբերած հերոսության համար պարգեւատրվեց կառավարական բարձր պարգեւով՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Պատերազմի ավարտից հետո Ա.Մանուչարյանը շարունակում է ծառայել հայոց բանակում՝ ստանալով նոր նշանակումներ: 1998թ. հունվարից ստանալով փոխգնդապետի կոչում՝ նշանակվել է 54122 զորամասի շտաբի պետի տեղակալ-օպերատիվ բաժնի պետ: 2007թ. տեղափոխվել է հետագա ծառայության N16346 զորամաս՝ որպես մարտական պատրաստության բաժնի պետ: 2010թ. նոյեմբերից նա տեղափոխվել է պաշտպանության նախարարության օպերատիվ բաժանմունք, որտեղ իր փորձն ու գիտելիքներն է հաղորդում հայոց բանակի մարտիկներին:

Հայրենիքը բարձր է գնահատել Ա.Մանուչարյանի մատուցած ծառայությունները՝ նրան արժանացրել է «Անբասիր ծառայության համար», «Զորավար Անդրանիկ», «Ադմիրալ Իսակով», ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-ամյակի հոբելյանական մեդալներով: Հայրենի քաղաքի իշխանությունները եւս բարձր են գնահատել նրա վաստակը: 2011-ի հոկտեմբերին, երբ տոնվում էր Կապան քաղաքի օրը, հայրենի եզերքի պաշտպանության գործում ունեցած ավանդի համար փոխգնդապետ Արարատ Մանուչարյանին հանձնվեց «Կապան» ոսկե հուշամեդալը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեն-միակ բաղձանքը՝ նորեն բացված տեսնել հայրենի Շրվենանցի դպրոցի դռները

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔ

Հայրը՝ Արմենակ Վարդանյանը, մեղադրվել էր «ժողովրդի թշնամի» ահասարսուռ մեղադրանքով, եւ 1949թ. հունիսի 14-ին ընտանիքը ստալինաբար բռնաուղարկվել է հեռավոր Ալթայի երկրամաս: Ընդամենը 10 տարեկան էր Շրվենանց գյուղից սերված ռանչպար Արմենակի դուստր Ժենյան:

Ինչ պետք է արած լիներ այդ խեղճուկրակ շինականը, որ «արժանանար» նման բռնության: Հետագայում պարզվեց՝ ոչինչ էլ չէր արել... Ժենյա Վարդանյանը խուսափում է այդ տարիների մասին բարձրաձայնելուց: Երեւի դժնդակ տարիները վերհիշելը տհաճություն է պատճառում պատվելի տիկնոջը: Ինչեւէ, վեց տարի օտարության մեջ դեգերելուց հետո արդարացվել ու հետդարձի ճանապարհն է բռնել:

Ուսման պակասը լրացրել է Կապանի N3 ռուսական միջնակարգ դպրոցում: Կրթօջախն ավարտելուց հետո ծայր առավ մանկավարժական գործունեությունը: Նախ՝ ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի, հետո ուսմասվար՝ հայրենի բնօրրանի արժանահիշատակ եւ հռչակավոր գյուղական դպրոցում: Աշխատանքային գործունեությանը զուգահեռ սովորել եւ ավարտել է Երեւանի պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի եւ գրականության հեռակա բաժինը: Ուսուցչություն է արել Կապանի N4 եւ N2 միջնակարգ դպրոցներում:

1994-2004թթ. աշխատել է ղեկավարածս միջնակարգ դպրոցում՝ Կապանի N11-ում (Կավարտ):

Տարիքով եւ մանկավարժական փորձով ու հմտություններով ամենաավագն էր, բոլորիս խորհրդատուն եւ նահապետը:

Ստեղծագործող ուսուցչուհի էր: Նա ոչ միայն կազմակերպում էր սովորողների ակտիվությունն ու ինքնուրույնությունը դասերի ժամանակ, այլեւ զգալապես փոխում էր նրանց վերաբերմունքն ուսումնական աշխատանքի նկատմամբ: Աշակերտների մեջ պատասխանատվություն ձեւավորելու եւ զարգացնելու անզուգական վարպետ էր: Դիտողություն էր անում շատ նրբանկատ, մայրական սիրով ու գորովանքով: Իրենց իմացած ռուսերենի համար շատ-շատ սերունդներ պարտական են Ժենյա Վարդանյանին:

Ժամանակին տիկին վարժուհուն աշակերտել է մանկավարժության գիտակ, Լեռնածորի դպրոցի մերօրյա տնօրեն Ռոբերտ Գրիգորյանը /էջանանցի/:

Տեսնել էր պետք, թե ինչպես էր դասարան մտնելիս սրտին մոտ պահում ուսուցչի «պատիվը»՝ դասամատյանը: Եթե սկսնակ որեւէ ուսուցիչ նետում էր դասամատյանը սեղանին, մռայլվում էր, լուռ հերսոտվում ու անպայման նախատում՝ ինչպես կարելի է... չէ՞ որ ուսուցչի «սրբություն սրբոց» մատյանն է:

44 տարի անընդմիջելի դասարան մտնելուց հետո անցել է վաստակած հանգստի: Բազում պարգեւների, պատվոգրերի, շնորհակալագրերի ու մեդալների է արժանացել:

Գաղտնիք չէ, որ կնոջ համար առաջնայինն ընտանիքն է:

Ժենյա Վարդանյանը վերջերս կորցրել է էրիկին՝ Մաքսիմ Սարգսյանին: Երկու անգամ երկունքի քաղցր ցավով է տառապել եւ հասարակությանը պարգեւել երեք ուստր՝ Աշոտ, Արշամ /համածին եղբայրներ են/ եւ Ահարոն:

Տիկին Ժենյան անշփոթելի տատիկ է, երեւելի տանտիրուհի:

Մեն-միակ բաղձանք ունի՝ նորեն բացված տեսնել հայրենի Շրվենանց գյուղի դպրոցի գոց դռները:

ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Քաջարանի N1 միջնակարգ դպրոցի տնօրեն

Ի լրումն «Սյունյաց երկիր» թերթի 28 մարտի 2012թ. թիվ 6 /247/ համարում հրապարակված «Առողջության պահպանման Սյունիքի հիմնադրամի» հաշվետվության, հրապարակվում է ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի /աուդիտորի/ եզրակացությունը:

Աուդիտորական եզրակացություն

Առողջության Պահպանման Սյունիքի Հիմնադրամին.

Մեր կողմից իրականացվել է Առողջության Պահպանման Սյունիքի Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) առ 31.12.2011թ. հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին 2012թ. հաշվետվությունների աուդիտ:

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Հիմնադրամի ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի ընտրանքային հետազոտումը: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվություն-ների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, Հիմնադրամի ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվություններն արժանահավատ են և տալիս են Հիմնադրամի 2011թ. դեկտեմբերի 31-ի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների մասին [illegible] իրական պատկերը:

Տնօրեն Գագիկ Գալստյան
«Արաքս-Աուդիտ» ՍՊԸ
Երևան
18.03.12թ.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Լեռնածորի հիմնական դպրոցը խորապես վշտացած է Հենրիկ Պողոսյանի վաղաժամ մահվան առթիվ եւ ցավակցում-մխիթարում է թոռներին՝ աշակերտներ Միքայելին, Սոնային, Մանեին, Դերենիկին:

Հոնքը սարքելու փոխարեն աչք են հանում

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

Խմբագրություն այցելած էդիկ Պատվականյանը, ով բնակվում է Կապան քաղաքի Բաղաբերդ 18/35 հասցեում, շենքի բնակիչների անունից, բավականաչափ բորբոքված, խոսում էր այն անտարբերության ու անհոգության մասին, որ տիրում է պաշտոնական պարտականություններ կատարող անձանց մոտ իրենց շենքի անմխիթար վիճակին վերաբերող հարցում: Բանն այն է, որ այդ հինգհարկանի շենքը կառուցված է Ողջի գետին շատ մոտ, եւ նկուղային հարկերը գտնվում են ավելի ցածր մակարդակի վրա, քան գետն է: Տարիներ շարունակ ջուրը ծծվում-լցվում է նկուղները, քայքայում հիմքերը: Պատկան մարմինները, փոխանակ ինչ-որ ձեւով գետի հունը խորացնելու, կամ պատնեշն ամրացնելու, իրենց չմտածված քայլերով ավելի են վատթարացնում վիճակը:

«Անցյալ տարի Կապանի «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ ներկայացուցիչները, հավանաբար արտադրական ջուր վերցնելու նպատակով, գետի մակարդակը բարձրացնելու համար ամբարտակ պատրաստեցին եւ ուզում էին բետոնապատել, բայց շենքի բնակիչներս թույլ չտվեցինք դա անել, թեեւ նրանք ներկայացրին ինչ-որ փաստաթղթեր:

Հիմա էլ խոսակցություն կա այն մասին, որ բետոնապատումը կարվի այս տարի: Մենք չենք հասկանում, թե ով է տվել այդպիսի թույլտվություն: Թող քաղաքապետարանի աշխատակիցները գան ու տեսնեն, թե ինչ է կատարվում հիմա. գարնանային հորդացման հետեւանքով ջուրը կրկին բարձրացել է եւ աննահանջ լցվում է նկուղները: Եթե հունի մեջ սարքված ամբարտակը չլինի, ջրի մակարդակը մոտ կես մետրով կիջնի, իսկ ցանկության դեպքում կարելի է այս հատվածում էլ ավելի իջեցնել ջրի մակարդակը»:

Այստեղ են ասել՝ հոնքը սարքելու փոխարեն աչքն են հանում:

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Սյունյաց երկիր

Ականավոր հայագետ Նիկողայոս Ադոնցի մասին

ՀՈՒՇԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

2011թ. լրացավ ականավոր պատմաբան, բյուզանդագետ, հայ պատմագիտության երախտավոր, մանկավարժ Նիկողայոս Ադոնցի ծննդյան 140-ամյակը: «Սյունյաց երկիր» լրագիրը այդ առիթով կատարեց մեծածավալ ու շնորհակալ աշխատանք. մի ամբողջ համար (2011, հոկտեմբերի 18, N17) նվիրեց աշխարհահռչակ պատմաբանին եւ 60 էջի սահմաններում լուսաբանեց ու վերաարժեքավորեց մեծ հայի գիտամանկավարժական գործունեությունը: Հարկ է նշել, որ մեր օրերում ադոնցագիտության բնագավառում հսկայածավալ աշխատանք է կատարում Երեւանի պետական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Պետրոս Հովհաննիսյանը՝ ի մի բերելով եւ առանձին հատորներով հրատարակելով Ն.Ադոնցի գիտական ամբողջ ժառանգությունը («Պատմագիտական ուսումնասիրություններ», «Պատմաբանասիրական ուսումնասիրություններ», «Հայրենագիտական ուսումնասիրություններ», «Քննական պատմություն Հայոց», «Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ» եւ այլն):

Ն.Ադոնցի գրական ժառանգությունն ամբողջացնում են նրա նամակներն ու ժամանակակիցների հուշագրությունները: Լիահույս ենք, որ ստորեւ ներկայացվող հուշ-պատառիկն իր համեստ նպաստը կբերի Ն.Ադոնցի մասին հուշագրությունների ամբողջացման գործին:

Հուշագրության հեղինակը ՀՅԴ անդամ, դիվանագետ, Հայաստանի Առաջին Հանրապետության (1918-1920թթ.) շրջանում խորհրդարանի անդամ, Ս.Վրացյանի կառավարությունում՝ ֆինանսների եւ խնամատարության նախարար, 1920թ. մայիսին Լեւոն Շանթի գլխավորությամբ Մոսկվա մեկնած պատվիրակության անդամ, ապա՝ 1921թ. փետրվարի 18-ին ստեղծված «Հայրենիքի փրկության կոմիտեի» անդամ Համբարձում Տերտերյանն է (1884-1955թթ.):

1906-1907թթ. Մայկոպ աքսորված Հ.Տերտերյանը որոշում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում վերականգնել ուսումը եւ այդ նպատակով 1907թ. օգոստոսի վերջերին կեղծ անձնագրով աքսորավայրից անլեգալ անցնում է Պետերբուրգ: Թոշակ ստանալու նպատակով Հ.Տերտերյանը Պետերբուրգում դիմում է տեղի Հայոց եկեղեցական խորհրդի անդամ Ն.Ադոնցին՝ ակնկալելով նրա միջնորդությունը: Հ.Տերտերյանի հուշերում նույնպես գիտական-մանկավարժը ներկայանում է մարդկային բարձր որակներով:

Հ.Տերտերյանի հուշերն առաջին անգամ հրատարակվել են Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրում (Համբարձում Տերտերեան, Ինն ամիս Մայկոպում եւ փախուստս, «Հայրենիք», Պօսթըն, 1955, ԼԳ տարի, մայիս, թիվ 5, էջ 55-69):

Ստորեւ ներկայացնում ենք հուշագրության այն հատվածները, որոնք վերաբերում են Ն. Ադոնցին:

Գեւորգ Ստեփանյան
պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ
ՀՅ ԳԱԱ պատմության ինստիտուտի
ավագ գիտաշխատող

Ես արդէն երկու տարի կորցրել էի. 1905-06 ուսումն. տարում համալսարանները փակ էին, իսկ 1906-07 ուսումն. տարում բանտարկուած ու աքսորուած էի: Երրորդ տարին էլ կորցնելու բնաւ մտադրութիւն չունէի, որովհետեւ երկարամեայ բացակայութեանս պատճառով կարող էին ինձ համալսարանից հեռացնել, եթէ դեռ հեռացրած չէին: Ուստի պէտք էր մի հնար գտնել՝ ընդհատուած համալսարանական կրթութիւնս շարունակելու համար: Միակ հնարը մի կեղծ անցագիր ձեռք բերելն էր՝ փախուստ տալու աքսորավայրիցս ու հաստատուելու համար Պետերբուրգում, ուր կարող էի քննութիւններ տալ համալսարանում իսկական ազգանունովս:… Պետերբուրգում հաստատուելուցս յետոյ, մի շարք կարեւոր խնդիրներ ունէի կարգադրելու: Առաջին խնդիրն էր, անշուշտ, համալսարանի հարցը: Գրասենեակից տեղեկացայ, որ ես հեռացուած չէմ համալսարանից ու համարւում եմ առաջին դասընթացի ուսանող: Աշխատեցի համոզել, որ 1906-07 ուսումն. տարին հաշուեն եւ որ ես պատրաստ եմ յետ ընկած քննութիւնները ժամանակին տալ ու համալսարանի մի տարուայ թոշակն էլ վճարել, բայց չյաջողեցի:

Ստիպուած հաշտուեցի երկու տարուայ կորուստի հետ: Պարտաւոր էի համալսարանի գրասենեակին յայտնել ուսանողի ճշգրիտ հասցէն: Բնական էր, որ հարկադրուած էի տալ մի հնարովի հասցէ:

Կարգադրելիք երկրորդ խնդիրը շատ աւելի դժուարին էր: Դա՝ նիւթականի հարցն էր: Եղբայրներս, դժբախտաբար, ի վիճակի չէին կանոնաւոր կերպով ինձ հասցնել ապրուստիս եւ ուսմանս ծախսերը: Ուստի անհրաժեշտ էր, որ կարողանայի օգտուիլ Պետերբուրգի եկեղեցական խորհրդի տրամադրած ստիպենդիաներից: Արդէն այդ նպատակով էր, որ գերադասել էի անհրապոյր ու մառախլապատ Պետերբուրգը արեւելից ու գեղածիծաղ Մոսկուային կամ Խարկովին:

Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը պահում էր 30 հոգի թոշակաւոր ուսանող, իւրաքանչիւր ամիս յատկացնելով երեսուն ռուբլի, ինն ամսուայ հաշուով: Բացի այդ, իւրաքանչիւր տարի մի քանի հազար ռուբլի միանուագ նպաստներ էր տալիս կարիքաւոր ուսանողների ուսման վարձի համար:

Այդ տարին երկու ազատ թոշակաւորների տեղ կար: Դրանց համար եկեղեցական խորհրդին 50-60 հոգու կողմից դիմում էր կատարուած: Ընդհանրապէս յաջողում էին այն խնդրարկուները, որոնք ուժեղ պաշտպաններ ունէին եկեղեցական խորհրդի կազմի մէջ:

Լաւ յիշում եմ, խորհրդի նախագահն էր շատ բարեմիտ, ազնիւ ու շիտակ մի հայ՝ պրոֆ. Վարդանեանը: Անդամներից յիշում եմ՝ գնդապետ Բաղրամեանին, Սուլթանշահին, Նիկ. Ադոնցին եւ Բողդանեանին: Դրանցից եւ ոչ մէկի հետ ծանօթութիւն ունեի. միայն գիտէի, որ Ն. Ադոնցը աւարտել էր Գէորգեան Ճեմարանի լսարանական բաժինը:

Իմ հաւաքած տեղեկութիւնների համաձայն, թէեւ Նիկ. Ադոնցը դաշնակցական չէր, բայց շեշտուած հակադաշնակցական էլ չէր: Ուստի որոշեցի դիմել նրա միջնորդութեանը այն մտածումով, որ ինքը ստացած ըլլալով հայկական կրթութիւն՝ գերադասութիւն պիտի տար ինձ նմաններին, որոնք թեմական դպրանոցի շրջանաւարտներ էին:

Առաջնորդուելով նման հաշիւներով՝ ուղեւորուեցի Ն.Ադոնցի բնակարանը: Երիտասարդ էի, բնաւորութեամբ դիւրաբորբոք, անիրաւ ու անճիշտ խօսքի դէմ յախուռն ձեւով արտայայտուող. ուստի մինչեւ Ադոնցի բնակարանը հասնելս, ամէն կերպ աշխատում էի ինձ ներշնչել համբերութիւն, խոհեմութիւն եւ համակերպութիւն:

Հաստատապէս որոշել էի ո՛չ մի պարագայում կուսակցական խնդիրների շուրջ չխօսել, առաւել եւս չվիճել: Նման վճռական որոշումով տան շէմքից ներս մտայ ու ներկայացայ Ադոնցին:

Շատ սիրալիր ընդունեց եւ ուշադրութեամբ լսեց խնդիրքս: Անկեղծ ուրախացաւ, որ թեմակարանաւարտ եմ: Հարց ու փորձ արաւ Նոր-Նախիջեւանի հասարակական կեանքի եւ թեմական դպրոցի մասին: Ինքս էլ չհասկացայ, թէ ինչպէ՞ս մեր խօսակցութիւնը ընդհանուր հասարակական բնոյթ կրող խնդիրներից աստիճանաբար անցաւ կուսակցական խնդիրների:

Մեր խօսակցութիւնը հասաւ Հայ-թաքարական չարաբաստիկ կռիւներին ու նրա հետեւանքներին եւ աստիճանաբար վերածուեց սուր վիճաբանութեան: Ինքս ինձ կորցնելով՝ Ն.Ադոնցին յիշեցրի Կռիլովի առակներից մէկը…

Վերջապէս, սթափուեցի ու, ներողութիւն խնդրելով, հեռացայ Ադոնցի բնակարանից:

Ամբողջ ճանապարհին գլուխս էի թակում ու կշտամբում ինձ, թէ ի՞նչպէս էի յիմարացել եւ շեղուել նախապէս տուածս հաստատ որոշումից:

Ամեն ինչ համարում էի կորած, եւ չափազանց մտահոգ էի հետագայ անելիքներիս մասին:

Մի շաբաթ յետոյ անցայ եկեղեցական խորհրդի գրասենեակը՝ խնդրագրիս արդիւնքի մասին տեղեկանալու համար: Չափազանց մեծ եղաւ զարմանքս, երբ նախասենեակի պատի վրայ կարդացի ազգանունս: Ինձ յատկացուած էր երկու թոշակներից մէկը:

Ուրախ տրամադրութեամբ ներս մտայ գրասենեակ ու ներկայացայ գործավարին, որը ինձ տեսնելով՝ շտապեց հարց տալ, թէ ի՞նչ ծանօթութիւն կամ բարեկամութիւն ունէի Ն. Ադոնցի հետ: Պատասխանեցի. «Ո՛չ բարեկամութիւն եւ ո՛չ էլ ծանօթութիւն ունիմ, բացի մի անախորժ հանդիպումից»: Յետոյ գործավարը մանրամասն պատմեց, թէ ի՞նչպես Ն.Ադոնցը յամառ կերպով պաշտպանել էր իմ թեկնածութիւնը, որպէս միակ արժանաւորի ու համոզել խորհրդի միւս անդամներին, որ թոշակներից մէկն ինձ յատկացնէին:

Անչափ զգացուած էի Ադոնցի նման վարմունքից: Մեծահոգութեամբ նա մոռացութեան էր տուել իմ երիտասարդական պոռթկումի հետեւանքով արածս վիրաւորական արտայայտութիւնները:

Նոյն օրը, կէս օրից յետոյ, շտապեցի այցելել Ն. Ադոնցին եւ շնորհակալութիւն ներս յայտնել: Նախ՝ ներողութիւն խնդրեցի յակամայից ինձ լաւ չպահելուս համար իմ առաջին հանդիպման ժամանակ եւ երկրորդ, խոստացայ կեանքումս ամէն կերպ արդարացնել յարգելի պրոֆեսորի վստահութիւնը: Ն. Ադոնցը ժպտադէմ եւ ինքնագոհ վստահեցրեց, որ ինքը բնաւ վիրաւորուած չէր, ընդհակառակը, շատ ուրախ էր, որ ինձ պէս մի երիտասարդ որոշ ու յատուկ գաղափարներ ունի ու հարկ եղած պարագային կարող է յամառ փաստացի տուեալներով պաշտպանել իր տեսակէտները: Ինքը վստահ էր, որ ես կարող էի հայ հասարակական կեանքի պիտանի անդամներից մէկը լինել:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արեւիսի գյուղական համայնքի /այսուհետ՝ համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ հետեւյալ համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արեւիսի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար
(ծածկագիր 1.2-1)

Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում եւ վերահսկում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը, ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության եւ արխիվային գործի վարումը, համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը եւ նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը, համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը: Օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, սահմանված դեպքերում եւ կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

Առնվազն միջնակարգ կրթություն (սույն պահանջը ուժի մեջ է մինչեւ 2015թ. հունվարի 1-ը), պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ ենթակետում նշված եւ իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2012 թվականի հունիսի 15-ին, ժամը 11.00-ին Արեւիսի գյուղապետարանի շենքում: Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները եւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Արեւիսի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչեւ 18.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2012 թվականի մայիսի 31-ը, մինչեւ ժամը 18.00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել համայնքի ղեկավարի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Արեւիս, հեռ.՝ 077040104, կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՀ վարչություն (հասցե՝ ՀՀ, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ.՝ 0285-23550):

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ԱԶԱՏԱՆՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 13 254
15 ՄԱՅԻՍԻ 2012

Բարի ծառայություն քեզ, Հայկ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ

Հայկ Ստեփանյանը դպրոցական տարիներին զբաղվում էր թեթեւ աթլետիկայով, նաեւ ավարտել է Կապանի N1 երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը, ասել է թե նախասիրությունների պակաս չունի, իսկ միջնակարգն ավարտելուց հետո ուսումը շարունակեց Երեւանի գյուղատնտեսական համալսարանի «Իրավագիտություն» ֆակուլտետում: Երկրորդ կուրսն ավարտելուց հետո զորակոչվեց ազգային բանակ, օրերս լրացավ ՀՀ պաշտպանության նախարարության «Վարդան Մամիկոնյան» շքանշանակիր 60369 զորամասում նրա ծառայության մեկ տարին: Բանակում եւս նա իրեն լավագույն կողմերով է դրսեւորել, ինչի մասին վկայում է զորամասի հրամանատարի եւ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով նրա տեղակալի ստորագրություններով շնորհակալական նամակը՝ ուղղված զինվորի հորը՝ Վարդան Ստեփանյանին. «Զորամասի հրամանատարությունը շնորհակալություն է հայտնում ձեզ՝ նրան հայրենիքի պաշտպանի ոգով դաստիարակելու եւ հայոց բանակի շարքերը համալրելու համար: Դուք կարող եք հպարտանալ, որ մեծացրել ու դաստիարակել եք նախնիների սխրանքներով ու պատգամներով տոգորված զավակ, ով ամեն վայրկյան պատրաստ է անձնվիրաբար ծառայել իր ժողովրդին, պաշտպանել հայրենիքը:

Զինծառայող՝ շարքային Հայկ Ստեփանյանն աչքի է ընկնում ընկերասիրությամբ, բարեսրտությամբ, կարգապահությամբ: Հրամանատարության կողմից տրված հրամաններն ամբողջ ծավալով կատարող զինծառայող է: Վայելում է համածառայակիցների սերն ու հարգանքը»:

Շնորհակալական նամակի ավարտին զորամասի հրամանատարությունը համոզմունք է հայտնում, որ հիմնվելով ընտանեկան դաստիարակության վրա՝ ամեն ինչ կանի Հայկի կողմից ռազմամասնագիտական գիտելիքների յուրացման, հմտությունների եւ կարողությունների ձեռքբերման, բարոյամարտական վսեմ հատկանիշների ձեւավորման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա նրան պատվով կրել Հայաստանի Հանրապետության պաշտպանի բարձր կոչումը ու բարեխղճորեն կատարել իր սահմանադրական պարտքը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեծավաստակ մանկավարժն ու ազնիվ քաղաքացին

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔ

Մարդը գեղեցիկ է դառնում իր աշխատանքով ու հարուստ գիտելիքներով: Գիտելիքները չեն գնահատվի, եթե չնվիրաբերվեն մարդկությանը, առավել եւս մատաղ սերնդին, դպրոցականներին: Այս մարդը մեր ժամանակակիցն է, մեր գործընկերը, ով մանկուց ցանկություն է ունեցել լավ սովորել ու երազել է ուսուցիչ դառնալ: Այդպես էլ կատարվել է:

Ռազմիկ Հարությունյանը կյանքի ու աշխատանքի երկար ճանապարհ է անցել, համարձակորեն հաղթահարել խոչընդոտները:

Ծնվել է 1939թ. Սիսիանի շրջանի Շաղատ գյուղում, նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի 7-ամյա դպրոցում: Դրանից հետո կրթությունը շարունակել է ծննդավայրից ոչ շատ հեռու՝ պատմական Անգեղակոթ գյուղի միջնակարգ դպրոցում: Նա 10-րդ դասարանն ավարտել է գերազանց գնահատականներով եւ արժանացել ոսկե մեդալի: Պահը շատ ուրախ էր դպրոցի ողջ կոլեկտիվի եւ Շաղատի համայնքի համար: Ուսման հանդեպ ցանկությունները նրան տանում են Երեւանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը (այժմ՝ համալսարան): 1955թ. ընդունվել է բանասիրական-աշխարհագրական ֆակուլտետը եւ ավարտել 1960թ.: Մի այլ հետաքրքիր բան, նախ՝ ֆիզիկական եղել է առողջ ու աշխատասեր: Ֆինանսապես կարիքի մեջ է եղել, ելնելով դրանից՝ ուսման տարիներին զուգահեռաբար ներգրավվում է աշխատանքի մեջ՝ Երեւանի «Հայէլեկտրո» գործարանում:

Ուսանելու տարիներին ակտիվորեն մասնակցել է ՈՒԳԸ-ի գործունեությանը եւ հանդես եկել զեկուցումներով: Լավ հասկացել է գյուղատնտեսությունը, հողի մշակման տեխնոլոգիան եւ պատահական չի եղել նրա կարդացած զեկուցումը՝ «Կարտոֆիլի քառակուսի բնային ցանքը»: 1960թ. երիտասարդ ուսանողը հաջողությամբ ավարտել է ինստիտուտը, ծառայել բանակում, 1963թ. զորացրվելուց հետո վերադարձել է գյուղ: Նույն տարում ոտք է դնում Շաղատի դպրոցի շեմին, հրամանը ձեռքին, ուսուցիչ աշխատելու համար: Ուսուցչական կոլեկտիվը գրկաբաց ընդունում է նրան: 1963-1969թթ. աշխատել է՝ ուսուցիչ, ապա՝ ուսմասվար, 1972թ.՝ դպրոցի դիրեկտոր (տնօրեն): Պատվով է կատարել իր աշխատանքն ու արժանացել հարգանքի: Դպրոցի հանդեպ սեր ունեցող մանկավարժը աշխատած տարիների ընթացքում ակտիվորեն կապված է եղել հասարակական-քաղաքական կյանքին, զբաղվել գյուղատնտեսությամբ:

Երեւանում եւ Մոսկվայում մասնակցել է տարբեր կազմակերպությունների համագումարների (1978թ. Կրեմլում): Մտավորականը, մանկավարժը, պրոպագանդիստն ու լրագրողը բազմիցս զեկուցումներ է կարդացել, տարբեր թերթերում նրա հոդվածներն են տպագրվել: Մոսկվայում համագումարի օրերին «Советская культура» թերթում տպագրվեց՝ «Воспитать гражданина» վերնագրով հոդվածը:

Գործունեության տարիներին արժանացել է մի շարք պատվոգրերի, իսկ 1984թ. «Պատվո նշան» շքանշանի:

Այժմ վայելում է վաստակած հանգիստը: Մշտապես կապված է գրականության, մամուլի, գյուղի համայնքի ու դպրոցի հետ:

ԺՈՐԱ ՄԱՆՈՒՅՅԱՆ
Շինուհայր

ՀԱՎԵՔԱԿԱՆ ԹԵՍՏ

Որն է ձեր «ԵՍ»-ից ավելի ուժեղը

Մարդը հակասական արարած է: Նրա մեջ առկա են եւ՛ լուսավոր, եւ՛ մութ բնազդներ: Ուզու՞մ եք իմանալ, թե ներկա պահին որ «ես»-ն է ձեր հոգում տիրապետողը: Յուրաքանչյուր «այո» պատասխանը գնահատեք 10 միավոր:

Թեստ լուսավոր «Ես»-համար

1. Սիրում եմ քոթոթներին, փիսիկներին ու երեխաներին:
2. Միշտ պատրաստ եմ օգնելու մտերիմներիս:
3. Սիրում եմ երաժշտություն եւ ծաղիկներ:
4. Հավատում եմ հավերժական սիրուն:
5. Պաշտում եմ հյուր ընդունել:
6. Սիրում եմ նվերներ տալ:
7. Հեշտորեն ծիծաղում ու լալիս եմ:
8. Սիրում եմ աշխատանքս:
9. Գարունը տարվա լավագույն եղանակն է:
10. Կյանքում ամենագլխավորը փողը չէ:

Թեստ մութ «Ես»-ի համար

1. Ես հիշաչար եմ:
2. Ժլատ եմ:
3. Նախանձ եմ:
4. Դյուրաբորբոք եմ:
5. Երբեմն ստում եմ:
6. Քինախինդ եմ:
7. Զուրկ եմ կարեկցության զգացմունքից:
8. Դաժան եմ:
9. Կարող եմ գողություն անել:
10. Մռայլ մարդ եմ:

Առանձին հաշվեք թեստերից յուրաքանչյուրի միավորները: Լուսավոր «Ես»-ի գումարից հանեք մութ «Ես»-ի գումարը: Եթե ստացված թիվը «մինուս» նշանով է, ուրեմն ձեր հոգում իշխում են խավարի ուժերը:

0-50 Ձեր մեջ մարում է լույսի ճառագայթը: Ավելի լայն բացեք ձեր հոգին, եւ լույսն անպատճառ կհաղթի խավարին:

60-100 Լույսը հաղթանակ է տարել խավարի հանդեպ: Սակայն զգոնությունը մի կորցրեք, քանի ձեր հոգուց արմատախիլ չեք արել խավարի վերջին ընձյուղները:

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 15.05.2012թ.:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գորիսի պետական համալսարանը հայտարարում է 2012/13թ. առկա ուսուցման ընդունելություն՝

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2012թ. մայիսի 5-ից հունիսի 1-ը:

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

ա) Լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ)
բ) 6 լուսանկար (3x4 սմ չափսի),
գ) փաստաթուղթ զինվորական ծառայության առնչության մասին,
դ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),
ե) զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին.
զ) արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաեւ զինծառայող ծնողի զոհվելու մասին), առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին,
է) միջազգային եւ հանրապետական օլիմպիադաների դիպլոմներ,
ը) փաստաթղթերի ընդունման եւ ձեւակերպման համար 1.500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Դիմորդը կարող է մասնակցել ՀՀ տարբեր քաղաքների մեկ կամ մի քանի պետական եւ ոչ պետական բուհերի մինչեւ 2 անվճար եւ մինչեւ 8 վճարովի մասնագիտությունների մրցույթին:

Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելն արգելվում է: Տեղեկությունների համար զանգահարել՝ 2-58-90:

Հասցեն՝ ք,Գորիս, Ավանգարդ 4:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մասնագիտությունների ցանկ

Մասնագիտություններ	Ընդունելության քննությունները				Ընդունելության տեղ/այդ թվում			Ուս. վարձը (դրամ. դրամ)
	Մրցութային			Ոչ մրցութային	մրցութային	ՏՊ վճարովի	Միջազգային	
Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ (գ)*	2	18	20	200
Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	18	20	200
Դեղագործական քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	18	20	280
Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ ԸՊ(գ)	Հլ(գ)		2	25	27	280
Իրավագիտություն (մանկավարժություն)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ ԸՊ(գ)	Հլ(գ)			28	28	320
Հայոց լեզու եւ գրականություն	Հլգ(բ)	Հլգ(գ)	Օտլ(գ)** կամ ՀԺՊ(գ)**		2	24	26	220
Մանկավարժություն եւ մեթոդիկա (տարրական կրթության)	Հլգ(գ)	Մ(գ)**			2	20	22	250
Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		2	28	30	300
էլեկտրա-էներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ (գ)*	2	20	22	220
էլեկտրոնային տեխնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ (գ)*	2	20	22	200